ԱՓ 08/08-02

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

ՀՀ Ներհոսող Տրանսֆերտների Որոշիչները և Շարժառիթները: Տրանսֆերտ, Տնտեսական աճ և Իրական Փոխարժեք Փոխկապվածությունը

Հեղինակ՝ Հարություն Սարգսյան

Մասնակցել են՝
Վարդան Արամյան, Վահագն Գրիգորյան, Աշոտ Մկրտչյան

Դրամավարկային քաղաքականության վարչություն
Արտաքին Տնտեսական Հարաբերությունների բաժին

ԵՐԵՎԱՆ 2008

Բովանդակություն

1. Ներածություն 3
2. Տրանսֆերտների տեսական միկրոորոշիչները և շարժառիթները 4
3. Տրանսֆերտների էմպիրիկ որոշիչները. 11
4. Տրանսֆերտների մակրոտնտեսագիտություն 14
4.1. Կարճաժամկետ տեսակետներ 15
4.2. Երկարաժամկետ տեսակետներ. 19
5. Տրանսֆերտների միկրոորոշիչները Հայաստանում 25
5.1. Արդյունքների ամփոփում 33
5.2. Լրացուցիչ դիտարկումներ 38
5.3. Եզրակացություն 44
6. Ինչպես են արձագանքում տրանսֆերտները ներքին տնտեսության ՀՆԱ ցիկլային տատանումներին 46
7. Տրանսֆերտների տնտեսական ազդեցությունները ՀՀ-ում 52
7.1. Տրանսֆերտ-իրական փոխարժեք 55
7.2. Տրանսֆերտ-տնտեսական աճ 57
8. Ընդհանուր ելույթի ամփոփում 64
9. Օգտագործված գրականություն 67

1. Ներածություն

Վերջին ժամանակներս տնտեսագետների կողմից արդիական վերլուծությունների շարքում բավականին մեծ տարածում են ստացել աշխատուժի միգրացիային, տրանսֆերտներին վերաբերող թեմաները, որոնց հիմնական նպատակների շարքում առանձնացվում են դրանք պայմանավորող մակրո-միկրո որոշիչները և հնարավոր մակրոտնտեսական ազդեցությունները: Տասնամյակ առաջ նման վերլուծությունները չէին կարևորվում այն պարզ հանգամանքով, որ զարգացող և անցումային երկրների մասնավոր հատվածի կողմից ուղարկվող փոխանցումների ծավալները բավականին փոքր էին: Բացի դա տրանսֆերտների վերլուծությունները վերաբերում էին հիմնականում ալտրուիստական մոտեցումներին, ինչպես նաև բացառվում էին տրանսֆերտների դրական ազդեցությունները տնտեսական զարգացման վրա: Երկրների միջև ինտեգրման շարունակական գործընթացը, ինչը հանգեցնում է աշխատուժի երկրների միջև տեղաշարժի ակտիվացմանը և հետևաբար՝ դրամական փոխանցումների տարեցտարի աճող հոսքերի, արդեն տնտեսական քաղաքականության տեսանկյունից առանձնակի ուշադրության է արժանանում: Ուստի խելամիտ և ժամանակին լուծումներ տալը երկարաժամկետում կունենա իր դրական արդյունքները:

Աշխատուժի միգրացիայի նոր տեսությունը առաջարկում է տարբեր մոտեցումներ փորձնական վերլուծությունների համար, որոնք միգրացիայի և տրանսֆերտների որոշիչների կողքին եզրահանգումներ են անում նաև այլ տեսանկյուններից:

Նյութը բաղկացած է երկու հիմնական մասից. առաջին մասում ներկայացված է տեսության կողմից առաջ քաշվող տրանսֆերտների շարժառիթներին վերաբերող նոր մոտեցումները, տրանսֆերտների մակրո և միկրո ազդեցությունները տնտեսության վրա: Երկրորդ մասն ամբողջովին վերաբերում է Հայաստանի օրինակին, որտեղ 2006թ. ՀՀ տնային տնտեսությունների կողմից արտերկրներից ստացված դրամական փոխանցումների միջհատվածային տվյալների հիման վրա մոդելավորվել է տրանսֆերտների վարքագիծը: Արդյունքում՝ փորձնականորեն ապացուցվել է ալտրուիստական շարժառիթների գերակայությունը:

Իրականացվել է տրանսֆերտների ցիկլային վարքագծի վերլուծություն, որի արդյունքում գնահատվել է տրանսֆերտների զգայունությունը Հայաստանի տնտեսական աճի տատանումներից: Եվ ի տարբերություն միկրոմակարդակում արված վերլուծության արդյունքների, որոնք վկայում են ալտրուիստական շարժառիթների գերակայությունը կամ առավելապես սպառման հարթեցման շարժառիթները, մակրոմակարդակում տրանսֆերտները դրականորեն (համացիկլիկայնություն) են արձագանքում ՀՆԱ տատանումներին՝ ենթադրելով ճիշտ հակառակ՝ ներդրումային, վարքագիծ:

Եվ վերջում ներկայացված է մակրոմոդել, որտեղ տրվել է տրանսֆերտների ազդեցության գնահատականը վերջին տարիների տնտեսական աճի վրա: Բացի դա հետագա տարիների համար տրվել են տնտեսական աճի գնահատականներ՝ տրանսֆերտների վարքագծի տարբեր սցենարների ներքո:

2. Տրանսֆերտների տեսական միկրոորոշիչները և շարժառիթները

Տրանսֆերտների վերաբերյալ վերլուծություններ կատարելու ժամանակ տնտեսագետների մոտ հարց է առաջանում, արդյոք տրանսֆերտների վարքագիծը մեծամասամբ կարելի է բացատրել միգրանտների համընդհանուր բնութագրերով, թե դրանք էականորեն տարբերվում են, ինչի հիման վրա կարելի է տարանջատող դատողություններ կատարել: Այս հարցի պատասխանը տրված է Էդվարդ Ֆանկհաուզերի[1] (1995) կողմից կատարված Էլ Սալվադորի և Նիկարագուայի տրանսֆերտների վարքագծի համեմատական վերլուծությունում: Նշված երկրների օրինակը հետաքրքրական է այն առումով, որ 1980-ական թվականներին երկու երկրներում տնտեսական իրավիճակը բավականին նման է եղել, միգրանտների քանակը գրեթե նույնն է եղել՝ նման հատկանիշներով (սեռը, կրթական մակարդակը, միգրացիայի տևողությունը), սակայն Սալվադորում տրանսֆերտ ստացող տնային տնտեսությունները մոտ երկու անգամ գերազանցել են Նիկարագուայի տրանսֆերտ ստացող տնային տնտեսություններին: Բացի այդ տրանսֆերտների միջին ամսական մեծությունը շուրջ 2.6 անգամ բարձր է եղել Սալվադորում, քան Նիկարագուայում (119 ԱՄՆ դոլար Սալվադորում, 45 ԱՄՆ դոլար Նիկարագուայում):

Վերլուծության արդյունքում Ֆանկհաուզերը եկել է այն եզրահանգմանը, որ փոխանցումներ կատարելու վարքագծային տարբերությունները երկրների միջև չեն կարող մեծամասամբ բացատրվել միգրանտների համընդհանուր բնութագրերով՝ ներառյալ միգրացիայի տևողությունը: Վերջինիս հակառակ տրանսֆերտների ֆունկցիոնալ գնահատականների արդյունքում բացահայտվել է նշանակալի տարբերություններ փոխանցումներ կատարելու վարքագծի առումով (փոխանցումներ կատարելու շարժառիթները), ինչը թույլ է տվել եզրահանգելու, որ առանձնահատուկ բնութագրերը (այսինքն միգրանտների խմբից ինչպես են առանձնանում տրանսֆերտ ուղարկողները), ինչը յուրահատուկ է ամեն մի երկրի միգրանտներին, առանցքային տեղ են զբաղեցնում փոխանցումներ իրականացնելու միջերկրային վարքագծերում: Ճիշտ է, նշված վերլուծությունում Ֆանկհաուզերը չի մանրամասնում տրանսֆերտների շարժառիթները,

[1] Edward Funkhouser :"Remittances from international migration: A comparison of El Salvador and Nicaragua", The review of economics and statistics, vol 77 No.1(Feb. 1995), pp. 137-146

այնուամենայնիվ այն հիմք է տալիս փնտրելու տրանսֆերտներ կատարելու տարբեր շարժառիթներ:

Որպես միգրացիայի պատճառների ավանդական տեսակետ համարվում է եկամուտ ստանալու առավել հնարավորությունները արտերկրում: Այսինքն՝ միգրացիայի առաջնային որոշիչը[2] աշխատավարձերի տարբերությունն է, իսկ տրանսֆերտների առաջնային որոշիչը՝ ալտրուիզմը: Այնուամենայնիվ, մինչև վերջին ժամանակներս տրանսֆերտ կատարելու ալտրուիստական հակվածությունը շատ հաճախ ենթադրվում էր, քան փորձնականորեն ապացուցվում մրցակցող այլ տեսական մոտեցումների կողքին: Այն հանգամանքը, որ տրանսֆերտ ուղարկողը և ստացողը գտնվում են հեռավորության վրա հիմք է ստեղծում ալտրուիստական շարժառիթներին զուգահեռ փնտրել լրացուցիչ շարժառիթներ: Առաջին հերթին ենթադրվում է, որ տրանսֆերտները համարվում են միգրանտների ակտիվների պահպանման միջոց: Այսպիսի շարժառիթներն ընդհանրապես ժամանակավոր միգրացիայի նշան են: Եվ երկրորդ, միգրացիան հիմնականում, բայց ոչ ամբողջովին պայմանավորված է երկրների միջև աշխատավարձերի տարբերություններով, ինչը ենթադրում է, որ մարդիկ պատրաստ են կրելու տեղափոխման հետ կապված ծախսեր այլ երկրների աշխատուժի շուկաներ մուտք գործելու նպատակով:

Տրանսֆերտների տնտեսագիտական նոր մոտեցումների զարգացման և ուսումնասիրության արդյունքում վերը նշված ալտրուիստական մոտեցումների կողքին առաջ են քաշվում ռիսկերի դիվերսիֆիկացիայի, սպառումը հարթելու և ներդրումների ֆինանսավորման շարժառիթները: Տրանսֆերտների որոշիչների մասին տեսական դեբատներն առաջ են քաշվել Լուկասի և Սթարքի կողմից[3]: Ուսումնասիրելով տրանսֆերտները տնային տնտեսության մակարդակում առաջ քաշվեցին տրանսֆերտների հետևյալ հիմնական շարժառիթները՝ «մաքուր ալտրուիզմ», «մաքուր եսասիրություն» (pure self-interest), «չափավոր ալտրուիզմ» (tempered altruism or enlightened self-interest):

Մաքուր Ալտրուիզմ. Ընդհանուր գծերով ներկայացնենք ալտրուիստական մոտեցման գաղափարը, ինչը հիմնված է Սթարքի կողմից իրականացված մոդելի վրա: Սթարքը հանգել է այն եզրահանգմանը, որ միգրանտի եկամտի աճը և ալտրուիզմի աստիճանը հանգեցնում են տրանսֆերտների աճի: Իսկ տրանսֆերտները նվազում են տրանսֆերտ ստացողի եկամտի աճին զուգընթաց: Սակայն քանի որ միգրանտի և տրանսֆերտ ստացողի ալտրուիզմի աստիճանը ակնհայտ չէ, և այլ շարժառիթները նույնպես ենթադրում են տրանսֆերտների աճ միգրանտի եկամուտների աճին զուգընթաց, ապա հիմնական եզրահանգումը ալտրուիստական մոդելի այն է, որ տրանսֆերտների ծավալները չեն կարող ավելանալ ստացողի եկամուտների աճին զուգընթաց:

[2] Բացի աշխատավարձերի տարբերություններից գոյություն ունեն նաև միգրացիայի այլ պատճառներ, ինչը չի քննարկվի նյութում:

[3] R.Lucas, O. Stark "Motivation to remit: Evidence from Botswana", The journal of political economy, Vol 93, No 5. (Oct.,1985), PP 901-918.

Նշենք, որ փոխանցումների ալտրուիստական շարժառիթը սովորաբար ենթադրվում էր, քան տարանջատվում այլ մոտեցումներից: Վերջինիս համար բերվում է Ֆանկհաուզերի կողմից իրականացված վերլուծությունը, որտեղ առաջարկվում է փոխանցումների վարքագծային հավասարումներ հիմնված ալտրուիզմի վրա: Վերլուծության եզրահանգումներն են.

- Արտադրողականության պոտենցիալ ունեցող միգրանտները փոխանցում են շատ:
- Ցածր եկամուտ ունեցող տնային տնտեսությունները ստանում են շատ:
- Տրանսֆերտները պետք է ավելանան ուղարկողի և ստացողի միջև միջանձնային հարաբերություններից կախված, ինչպես նաև միգրանտի վերադառնալու մտադրությանը զուգահեռ:
- Մեկ միգրանտի կողմից փոխանցումները պետք է նվազեն տվյալ տնային տնտեսության միգրանտների քանակի ավելացմանը զուգահեռ:
- Փոխանցումների ժամանակային գրաֆիկը կախված է միգրանտի ժամանակային դիսկոնտային գործոնից և արտերկրում եկամուտների ստացման ժամանակային գրաֆիկից:

Առաջին երկու ենթադրությունները կարող են բացատրվել մի շարք շարժառիթների ներքո, երրորդ և հինգերորդ ենթադրությունները բավականին ընդհանուր են, մինչդեռ չորրորդ ենթադրությունը համապատասխանում է ներդրումների հիպոթեզին, ալտրուիզմի հիպոթեզին և ժառանգության հիպոթեզին (նշված հիպոթեզներին կանդրադառնանք ստորև):

Մաքուր եսասիրություն (pure self-interest) Ի հակադրություն ալտրուիզմի, «եսասիրությունը» նույնպես հանդիսանում է տրանսֆերտ կատարելու շարժառիթ: Այստեղ ենթադրվում են հետևյալ պատճառները, որտեղ բացառվում է ալտրուիզմը:

1. Առաջինը ժառանգության ձգտումն է կամ մտավախությունը մնալ առանց որևէ ժառանգության: Ըստ այս տեսության, տրանսֆերտներն ավելանում են տնային տնտեսության ակտիվների և եկամուտների, միգրանտի եկամուտների և բարեկեցության, ինչպես նաև ժառանգություն ստանալու հավանականության աճին զուգահեռ: Միայն ժառանգության ձգտելու դեպքում է, որ «եսասիրական» շարժառիթը տարբերվում է ալտրուզմից:
2. Երկրորդ եսասիրական շարժառիթն այն է, որ միգրանտը կատարում է ներդրումներ իր երկրի ակտիվներում (բնակարանների, հողի ձեռքբերման և այլն): Այս դեպքում տեղի տնային տնտեսությունը կարող է լինել հուսալի և լավ տեղեկացված գործընկեր:
3. Եվ երրորդ, երկիր վերադառնալու մտադրությունը, ինչը կարող է խթանել ներդրումները տարբեր տիպի ակտիվներում:

Չափավոր ալտրուիզմ (tempered altruism or enlightened self-interest) Միայն մաքուր ալտրուիստական և մաքուր եսասիրական շարժառիթները բավարար չեն բացատրելու տրանսֆերտների ծավալներն ու տատանողականությունը ժամանակի ընթացքում: Այս դեպքում միգրանտը և ընտանիքի անդամները փոխադարձաբար շահում են միգրացիայից՝ որոշակի ոչ բացահայտ կամ ոչ ֆորմալ համաձայնությունների միջոցով: Որպես ոչ ֆորմալ պայմանագրեր այստեղ դիտարկվում են *ապահովագրումը, նախկինում վերցված վարկերի վերադարձը և փոխանակում ծառայությունների դիմաց*: Այս տեսությունը չի հանդիսանում միջանկյալ տարբերակ վերը նշված շարժառիթների, այլ առաջարկում է բավականին տարբեր հիպոթեզների շարք:

Աշխատուժի միգրացիայի նոր տեսությունը պնդում է, որ կապիտալի և ապահովագրական շուկաների անկատարությունների պայմաններում միգրացիան դիտարկվում է որպես եկամուտների ստացման աղբյուրների դիվերսիֆիկացիայի միջոց ռիսկերի առկայության դեպքում: Սա հիմնականում վերաբերում է զարգացող երկրների գյուղական շրջաններին, որտեղ եկամուտների տատանողականությունը բավականին մեծ է: Ընտանիքի անդամները ֆինանսավորում են միգրացիայի ծախսերը և ընտանիքի անդամներից որևէ մեկին ուղարկում են արտագնա աշխատանքի: Այս դեպքում միշտ չէ, որ բարձր աշխատավարձի պոտենցիալ ունեցողներն են մեկնում արտերկիր, քանի որ տրանսֆերտներն այստեղ համարվում են որպես եկամուտների այլընտրանքային ապահով աղբյուր: Հետևաբար տրանսֆերտներն ավելանում են, երբ տնային տնտեսության եկամուտները կրճատվում են կամ տեղի է ունենում որևիցե շոկ: Վերջինս նշված հանգամանքով նման է ալտրուիստական շարժառիթներին, իսկ տարբերությունը կայանում է նրանում, որ տրանսֆերտների ենթադրվող ժամանակային գրաֆիկը այս դեպքում տարբեր է: Մեկ այլ տարբերություն երկու հիպոթեզների միջև այն է, որ մաքուր ալտրուիստական մոդելներում ենթադրվում է, որ ցածր եկամուտ ունեցող տնտեսությունները, այլ հավասար պայմաններում, ստանում են տրանսֆերտների համեմատաբար մեծ ծավալներ, մինչդեռ *ապահովագրության* շարժառիթի դեպքում կարող է տեղի ունենալ ճիշտ հակառակ երևույթը, որի պատճառներից մեկն այն է, որ միգրացիայի անհրաժեշտ ծախսերի ֆինանսավորման համար անհրաժեշտ է, որ տնային տնտեսությունը տիրապետի բավարար ակտիվների, հետևաբար այս դեպքում բարձր եկամուտ ունեցողները ստանում են տրանսֆերտների համեմատաբար մեծ ծավալներ:

Նման տրամաբանությամբ տրանսֆերտները դիտարկվում են որպես նախկինում վերցրած *վարկերի վերադարձման* աղբյուր, որոնք կատարվել են կրթության կամ միգրացիայի ծախսերի ֆինանսավորման համար: Ժամանակի ընթացքում միգրանտը կարող է գտնել առավել բարձր

վարձատրվող աշխատանք՝ կրթություն ստանալու արդյունքում, և տրանսֆերտների տեսքով փոխհատուցել ընտանիքի կողմից նախկինում կատարված ներդրումները: Այս դեպքում ընտանեկան ոչ բացահայտ պայմանագրերի նպատակն է ավելացնել ընտանիքի եկամուտները, քան նվազեցնել անորոշությունները: Տրանսֆերտների և տնային տնտեսության եկամուտների միջև կախվածությունը դեպի ներքև ուղղված U-աձև կորի տեսքով է, այսինքն՝ միգրացիայի սկզբնական տարիներին տրանսֆերտների ծավալներն ավելանում են, այնուհետև՝ աստիճանաբար նվազում: *Նմանությունը ալտրուիստական շարժառիթների հետ այն է, որ երկու դեպքում էլ միգրանտի կրթական մակարդակի և տրանսֆերտների միջև գոյություն ունի դրական կախվածություն:*

Փոխանակում ծառայությունների դիմաց. Այս մոտեցման դեպքում ենթադրվում է, որ տրանսֆերտները պարզապես ուղղվում են տարբեր տիպի ծառայությունների գնմանը, ինչպիսիք են օրինակ՝ միգրանտների ակտիվների պահպանման ծառայությունները, երեխաների խնամքը: Այսպիսի շարժառիթը հիմնականում ժամանակավոր միգրացիայի նշան է: Միգրանտի եկամտի և տրանսֆերտների ծավալների միջև գոյություն ունի դրական կախվածություն: Այն դեպքում, երբ տրանսֆերտներն օգտագործվում են այնպիսի ծառայությունների համար, ինչպիսիք են միգրանտների ակտիվների պահպանման ծառայությունները, պարզ է դառնում, որ տրանսֆերտի մեծությունը պետք է գտնվի այդպիսի ծառայության շուկայական գնի և տրանսֆերտ ստացողի այլընտրանքային ծախսերի միջև: Կողմերի սակարկելու համեմատական աստիճանը որոշվում է աշխատուժի շուկայի ներքին պայմաններով (գործազրկության բարձր մակարդակը մեծացնում է միգրանտի սակարկելու հնարավորությունը): Բացի դա, երբ տնային տնտեսության եկամուտներն ավելանում են, այդպիսով միգրանտին մատուցվող ծառայությունները դարձնելով առավել թանկ, տրանսֆերտների աճը կամ նվազումն արդեն կախված է միգրանտի տվյալ ծառայության նկատմամբ պահանջարկի էլաստիկությունից: Եթե միգրանտի պահանջարկը ծառայությունների նկատմամբ ոչ էլաստիկ է, ապա միևնույն ծառայության դիմաց այժմ կվճարվի բարձր գին, ինչը կհանգեցնի տրանսֆերտների աճի՝ չնայած տնային տնտեսության բարձր եկամուտներին:

Փոխանակման մոտեցումը ներկայացված է Կոքսի մոդելում, որտեղ ենթադրվում է ալտրուիզմի բացակայություն և ծառայությունների ֆիքսված քանակություն: Մոդելի ներքո միգրանտի եկամտի աճին զուգահեռ մեծանում է ինչպես տրանսֆերտ ուղարկելու հավանականությունը, այնպես էլ տրանսֆերտների ծավալները: Այնուամենայնիվ, տրանսֆերտ ստացողի եկամտի ավելացմանը զուգահեռ ավելանում են տրանսֆերտների ծավալները, ի հակադրություն ալտրուիստական մոտեցման:

Համեմատության կարգով նշենք, որ ստացողի եկամտի և տրանսֆերտների մեծության միջև բացասական փոխկապվածությունը համապատասխանում է և ալտրուիզմի, և փոխանակման տեսություններին, մինչդեռ դրական փոխկապվածությունը՝ միայն փոխանակման տեսությանը:

Տրանսֆերտների ստրատեգիական շարժառիթ. Միգրացիայի տեսության մեջ առաջին անգամ ստրատեգիական շարժառիթը զարգացվել է Սթարքի կողմից 1995թ. (Stark, 1995, Chapter 4): Սթարքը առաջ քաշեց հետևյալ գաղափարը, որ այլ շարժառիթների կողքին տրանսֆերտները կարող են հանդիսանալ որպես ստրատեգիական փոխգործողության մի մաս միգրանտների միջև: Տրամաբանությունը հետևյալն է. այն դեպքում, երբ միգրանտները տարբերվում են իրենց որակական հատկանիշներով, և անհատական արտադրողականությունները ակնհայտ չեն արտերկրի աշխատուժի շուկայում (գոնե որոշակի ժամանակահատվածում), գործատուները կիրառում են «վիճակագրական խտրականություն» աշխատավարձերի վճարման գծով. միգրանտներին վճարվում է ողջ խմբի միջին արտադրողականությանը համապատասխան: Այդ իսկ պատճառով բարձր որակավորում ունեցող միգրանտները կարող է շահագրգռված լինեն դրամական փոխանցումներ կատարելու՝ ոչ որակյալ աշխատուժի միգրացիան կանխելու համար, քանի որ ոչ որակյալ աշխատուժի հայտնվելը արտերկրի աշխատուժի շուկայում նշանակում է աշխատավարձերի ցածր մակարդակ որակյալ աշխատուժի համար: Այս պայմանների ներքո տրանսֆերտները պատճառ են հանդիսանում միգրանտների և ոչ միգրանտների միջև ստրատեգիական փոխգործողություն: Ստրատեգիական վարքագիծը ենթադրում է տրանսֆերտների աճ միգրանտի եկամտի և կրթական մակարդակի միջև, ինչպես նաև տնային տնտեսության ցածր եկամտի[4]: *Վերջին ենթադրությունը նույնն է, ինչ որ ալտրուիզմի դեպքում:*

[4] Holst and Schrrooten (2006). Migration and money- What determines remittances? Evidence from Germany. Institute of economic research, Hitotsubashi Univercity, Discussion paper series, 477.

Աղյուսակ1. Տարբեր շարժառիթների ներքո բացատրող փոփոխականներից տրանսֆերտների զգայունությունը.

Շարժառիթներ	**Անհատական**				**Ընտանեկան ոչ ֆորմալ համաձայնություն**	
Բացատրող փոփոխականներ	**Ալտրուիզմ**	**Փոխանակում**	**Ժառանգություն**	**Ստրատեգիական շարժառիթ**	**Ապահովագրում**	**Ներդրում**
Միգրանտի եկամուտ	>0	>0	>0	>0	x(*)	>0
Միգրանտի կրթական մակ.	x	<0(*)	x	>0	x	>0(*)
Ժամանակ	<= 0	x	x	<= 0	x	x
Միգրանտների/ ժառանգների քանակը ընտանիքում	<0	x	Հակադարձ U-ածև ազդեցություն	x	x	x
Տնային տնտեսության եկամուտ	<0	> < 0(*)	x(*)	<0	x(*)	> < 0
SS եկամտի կարճաժամկետ շոկ	>0	> < 0(*)	x	>0	>0	>0
Տնային տնտ. ակտիվներ	x	x	>0(*)	x	x	x
Հատուկ եզրահանգումներ	$\frac{\partial T}{\partial I^m} - \frac{\partial T}{\partial I^h} = 1$	Հնարավոր է, որ $\frac{\partial T}{\partial I^h} > 1$	Ծնողների ակտիվների և ժառանգների դերը	$\frac{\partial T}{\partial I^m} - \frac{\partial T}{\partial I^h} > 1$ $\frac{\partial T}{\partial I^h} = -1$	Փոխանցումների ոչ կանոնավոր վարքագիծ Երկարաժամկետում տնային տնտ. եկամտի չեզոք ազդեցություն	Տնային տնտ. եկամտի հակադարձ U-ածև ազդեցություն

x – չկա ուղղակի ազդեցություն, եթե հաշվի են առնվում միգրանտի և/կամ տրանսֆերտ ստացողի եկամուտները

(*) - ակնհայտ եզրահանգում

3. Տրանսֆերտների Էմպիրիկ որոշիչները.

Չնայած այն հանգամանքին, որ միկրոտնտեսական որոշիչները շատ կարևոր են, մակրոտնտեսական փոփոխականները նույնպես ազդում են տրանսֆերտների ծավալների վրա: Վերլուծությունները հիմնականում կենտրոնացված են այնպիսի փոփոխականների վրա ինչպիսիք են միգրանտների քանակը, աշխատավարձերի տարբերությունները երկրների միջև, տնտեսական իրավիճակները երկրում և արտերկրում, փոխարժեքը և տոկոսադրույքների տարբերությունները երկրների միջև, քաղաքական ռիսկը և ինստիտուտները:

Միգրանտների քանակն ըստ էության համարվում է տրանսֆերտների ակնառու որոշիչ. միգրանտների քանակի աճին զուգընթաց ավելանում են տրանսֆերտների ծավալները[5]:

Կարևոր հանգամանք է նաև արտերկրի տնտեսական պայմանների բարելավումը, քանի որ վերջինս հնարավորություն է տալիս միգրանտին բարձրացնելու զբաղվածության և եկամուտների ստացման հնարավորությունները, որն իր հերթին թույլ է տալիս առավել քանակի դրամական փոխանցումներ իրականացնել: Ոչ միայն արտերկրի, այլև տվյալ երկրի տնտեսական վիճակը նույնպես կարևոր դեր է խաղում տրանսֆերտների ծավալների վրա, քանի որ երկրում բացասական շոկերը կարող են բարձրացնել տրանսֆերտների անհրաժեշտությունը կամ հանգեցնել նոր միգրացիոն հոսքերի (IMF 2005 World economic outlook).

Տնտեսական քաղաքականությունը և ինստիտուտները, օրինակ՝ արտարժութային միջոցների սահմանափակումները և ստվերային շուկաների առկայությունը, կարող են խոչընդոտել տրանսֆերտների փոխանցմանը և կարող են հանգեցնել տրանսֆերտների փոխանցման ոչ ֆորմալ ուղիների: Մակրոտնտեսական անկայունությունը, ինչը օրինակ կարող է արտահայտվել բարձր գնաճով կարող է ունենալ միևնույն բացասական հետևանքներ: Մյուս կողմից ֆինանսական հատվածի զարգացումը, ինչը հեշտացնում և նվազեցնում է դրամական փոխանցումների ծախսերը, կարող է խթանել տրանսֆերտները:

Երկրի ռիսկը, ինչպիսին է օրինակ՝ քաղաքական անկայունությունը կամ օրենքների չգործելը հանգեցնում է տրանսֆերտների նվազմանը, եթե վերջիններս նպատակաուղղված են եղել ներդրումների իրականացմանը: Սակայն հնարավոր է նաև, որ նման իրավիճակներում տրանսֆերտների անհրաժեշտությունը բերի առավել մեծ ծավալներով դրամական փոխանցումների: Ներդրումների հնարավորությունները երկրում և արտերկրում կարող են ունենալ իրենց ազդեցությունը: Ակտիվներից հարաբերական շահութաբերության աճը, օրինակ՝ արտերկրում, կարող է խրախուսել ներդրումները արտերկրում կամ հակառակը:

[5] Freud and Spatafora (2005) գնահատել են, որ միգրանտների կրկնակի աճը հանգեցնում է տրանսֆերտների 75% աճի:

Էմպիրիկ վերլուծության արդյունքներ.

Բազմաթիվ էմպիրիկ վերլուծություններում հիմնական խնդիրը վերաբերում է միգրանտի վարքագծից եզրահանգվող ալտրուիզմի աստիճանի բացահայտմանը: Նշենք, որ զարգացած երկրների համար տրանսֆերտների շարժառիթների գնահատմանն ուղղված շատ վերլուծություններում հիմնականում ժխտվում են մաքուր ալտրուիստական շարժառիթները: Այսպես՝ Altonji, Hayashi and Kotlikoff (1997) օգտագործելով Ամերիկայի մասնավոր դրամական փոխանցումների տվյալները բացառել են ալտրուիստական հիպոթեզը: Ըստ նրանց գնահատականների՝ տրանսֆերտ-եկամուտ էլաստիկության գործակիցը գտնվում է 0.04-0.13 միջակայքում, ինչը բավականին փոքր է մաքուր ալտրուիստական հիպոթեզով ենթադրվող միավոր մեծությունից:

Առաջին էմպիրիկ վերլուծությունը, որտեղ տարանջատվում են տարբեր շարժառիթները, Լուկասի և Սթարքի Բոթսվանայինն վերաբերող աշխատանքն է: Բացահայտվել է տրանսֆերտների և միգրանտի աշխատավարձերի միջև դրական կախվածություն, ինչը համապատասխանում է տարբեր շարժառիթների, այդ թվում՝ ալտրուիզմի: Բացի այդ, եթե մաքուր ալտրուզմը ենթադրում է, որ տրանսֆերտները հիմնականում ուղղվում են ցածր եկամուտ ունեցող տնային տնտեսություններին, ապա այս աշխատանքում գնահատվել է դրական փոխկապվածություն տրանսֆերտների ծավալների և տնային տնտեսության մինչ տրանսֆերտ ստանալը եկամտի միջև: Վերջինս ենթադրում է, որ փոխանակման, ներդրումների և ժառանգության հիպոթեզները կարող են հիմնական դերակատարումն ունենալ տրանսֆերտների հոսքերի ձևավորման մեջ:

Cox, Eser and Jimenez (1998) ստուգել են տրանսֆերտների երկու շարժառիթներ՝ երեխաներից դեպի ծնողներ և ծնողներից դեպի երեխաներ (Պերու 1980-ական թվականներին): Վերլուծելով տրանսֆերտների տևականությունը (timing), գնահատել են, որ տրանսֆերտների ստացումները և եկամուտները շարժվում են հակառակ ուղղություններով կյանքի ցիկլի ընթացքում, ինչը ենթադրում է, որ ֆինանսական միջոցների սահմանափակումներն իսկապես տեղի ունեն: Գնահատված արդյունքները ցույց են տվել, որ փոխանցումների հավանականությունը երեխաներից դեպի ծնողներ հակադարձ կախվածության մեջ է գտնվում ծնողների եկամտից, ինչը համապատասխանում է ինչպես ալտրուիզմին, այնպես էլ փոխանակման շարժառիթին: Սակայն եկամտի ազդեցությունը տրանսֆերտների ծավալների վրա սկզբնական տարիներին աճում է, այնուհետև նվազում: Նման կառուցվածքը կիրառվել է ծնողներից դեպի երեխաներ տրանսֆերտների շարժառիթների բացահայտմանը, ինչի արդյունքում հեղինակները եզրահանգել են, որ չափավոր ալտրուիստական հիպոթեզն առավել լավ է բացատրում տրանսֆերտների շարժառիթները, քան մաքուր ալտրուիստական մոտեցումները:

Շատ վերլուծություններում ցույց է տրվում դրական փոխկախվածություն միգրանտի եկամտի և տրանսֆերտների միջև, և բացասական փոխկախվածություն տնային տնտեսության և տրանսֆերտների միջև: Վերջիններս բացատրվում են ալտրուիստական շարժառիթների ներքո:

Մաքուր ալտրուիզմի դեպքում, միևնույն տնային տնտեսությունում միգրանտների քանակի և տրանսֆերտների ծավալների միջև պետք է լինի բացասական կախվածություն, քանի որ այս դեպքում տնային տնտեսության բարեկեցության համար պատասխանատվությունը բաժանվում է միգրանտների միջև: Շատ վերլուծություններ բացահայտել են այս կախվածությունը, ինչը ենթադրում է ալտրուիստական շարժառիթներ[6]: Մյուս կողմից որոշ վերլուծություններում գնահատվել է, որ նշված փոխկախվածությունը նշանակալի չէ, ինչը նշանակում է, որ ալտրուիզմի ներքո չի բացատրվում տրանսֆերտների վարքագիծը կամ այն միակ որոշիչը չէ:

Մաքուր եսասիրական շարժառիթը կարելի է ստուգել տրանսֆերտների և տնային տնտեսության կարողությունների միջև կախվածության գնահատմամբ: Տեսության համաձայն միգրանտները, որոնք ունեն ժառանգության շարժառիթներ առավել հավանական է, որ պետք է ուղարկեն տրանսֆերտների ավելի մեծ ծավալներ, եթե ծնողները տիրապետում են բավականաչափ ակտիվների: Ռոթսվանայի դեպքում նման շարժառիթները հաստատվել են. երիտասարդ միգրանտները փոխանցում են համեմատաբար շատ այն ընտանիքներին, որոնք տիրապետում են համեմատաբար մեծ ակտիվների:

Տրանսֆերտները որպես ապահովագրության շարժառիթ կարելի է գնահատել վերլուծելով տնային տնտեսության շոկերի ազդեցությունը և տրանսֆերտ կատարելու միգրանտի ռիսկերը: Բազմաթիվ վերլուծությունների համաձայն տնային տնտեսության ժամանակավոր շոկերը հանգեցնում են տրանսֆերտներ կատարելու մեծ հավանականության և համեմատաբար մեծ ծավալների: Այնուամենայնիվ, վերջինս շատ դժվար է տարանջատել ալտրուիստական վարքագծից:

Amuendo-Dorantes and Pozo (2006) ապահովագրության շարժառիթը գնահատելու համար տարանջատում են մտցրել ինքնաապահովագրման և ընտանիքի ապահովագրման միջև, միևնույն ժամանակ ալտրուիզմի: Վերջինս կատարվել է դիտարկելով տրանսֆերտների օգտագործման ուղղությունները: Եթե տրասնֆերտները ենթարկվում են եկամտի ռիսկերի արտերկրում և օգտագործվում են սպառման վրա, ապա վերջիններս փոխանցվում են ընտանիքի վերաապահովագրման շարժառիթներով: Երբ օգտագործվում են ակտիվների կուտակման նպատակով, ապա այս դեպքում ընտանիքը գործում է որպես հուսալի գործընկեր միգրանտի համար, այդ իսկ պատճառով որպես շարժառիթ հանդես է գալիս ինքնաապահովագրումը: Հեղինակները եկել են այն եզրահանգմանը, որ եկամտի մեծ ռիսկեր ունեցող միգրանտները

[6] Հետևյալ հեղինակները բացահայտել են դրական կախվածություն՝ Germenji (2001), Hoddinott (1994) and Pleitez-Chavez (2004).

փոխանցում են շատ, և տարբեր միգրանտներ օգտագործում են ապահովագրության տարբեր մեթոդներ:

Վարկերի վերադարձման շարժառիթի գնահատման համար կարելի է դիտարկել միգրացիոն ծախսերը և միգրանտի կրթական մակարդակը: Հնարավոր է, որ այն միգրանտները, որոնք օգնություն են ստացել իրենց ընտանիքի կողմից միգրացիոն ծախսերի ֆինանսավորման համար, փոխանցեն առավել շատ միջոցներ՝ որպես վարկերի վերադարձ: Բացի դա բարձրագույն կրթություն ստացած միգրանտները դրամական փոխանցումներ են կատարում նախկինում կրթության վրա կատարված ներդրումների վերադարձման համար: Բազմաթիվ վերլուծություններ փաստում են միգրանտի կրթական մակարդակի և տրանսֆերտների միջև դրական փոխկապվածությունը, որը ենթադրում է վարկերի վերադարձման շարժառիթի առկայությունը:

Եթե եզրակացնելու լինենք, ապա կարող ենք ասել, որ եթե տրանսֆերտների որոշիչների բացահայտմանն ուղղված վերլուծություններում համաձայնություն կա որոշ շարժառիթների գծով, շատ եզրահանգումներ մնում են հակասական մի շարք մեթոդոլոգիական խնդիրներից ելնելով: Փոխանցումներ կատարելու որոշումը հաճախ նույնացվում է միգրացիա կատարելու որոշման հետ, և որ ամենակարևորն է բավականին դժվար է գտնել այնպիսի փոփոխականներ, որոնք չափում են միայն մեկ շարժառիթ:

4. Տրանսֆերտների մակրոտնտեսագիտություն

Գրականության մեջ տարանջատվում են տրանսֆերտների ազդեցության կարճաժամկետ և երկարաժամկետ մոտեցումներ: Մինչև 80-ականների վերջերը մակրոտնտեսական վերլուծությունները հիմնականում կենտրոնացված էին տրանսֆերտների կարճաժամկետ ազդեցությունների բացահայտմանը, որտեղ դիտարկվում էին վերջիններիս ազդեցությունները տնտեսական ակտիվության և գների մակարդակի, առևտրի և հարաբերական գների վրա: Այնուհետև տնտեսական աճի նոր տեսությունների զարգացմանը զուգընթաց, առաջ եկան տնտեսական աճի վրա տրանսֆերտների ազդեցության նոր մոտեցումներ՝ եկամուտների բևեռացվածության վրա ազդեցության միջոցով:

4.1. Կարճաժամկետ տեսակետներ

Պահանջարկի ուղղվածություն ունեցող մոդելներում աշխատավարձերի և գների կոշտության պայմաններում կարճաժամկետ մոտեցումները կենտրոնացված են համախառն սպառման և թողարկման վրա տրանսֆերտների ազդեցությանը: Այս մոդելներին զուգահեռ 80-ականներին զարգացվեցին տրանսֆերտների առևտրի տեսություններ՝ հիմնված երկճյուղ (արտահանելի և ոչ արտահանելի) ընդհանուր հավասարակշռության մոդելների վրա: Վերջիններս դիտարկում են հարաբերական գների և բարեկեցության վրա տրանսֆերտների ազդեցությունները:

Ամանորական տեսակետ

Այս տեսակետի ներքո տրանսֆերտները ազդում են ՀՆԱ-ի հավասարակշիռ մակարդակի վրա: Քեյնսի մոդելը ամենահին մոդելներից է, որը փորձում է ներառել տրանսֆերտների կարճաժամկետ ազդեցությունները: Կոշտ գների, ֆիքսված փոխարժեքի ռեժիմի և տոկոսադրույքների, ինչպես նաև առաջարկի սահմանափակումների բացակայության պայմաններում պահանջարկի ցանկացած շոկի ազդեցության չափը համախառն թողարկման վրա տարբեր է: Վերջինս կախված է Քեյնսի բազմարկչից (որն իր հերթին կախված է այնպիսի պարամետրերից ինչպիսին է օրինակ՝ ներմուծման սահմանային հակվածությունը) և տրանսֆերտների մեծությունից: Ֆրիդմանի և Մոդիլյանիի աշխատություններից հայտնի է, որ սպառման հակվածությունը կապված է տնտեսվարող սուբյեկտի ապագա եկամտի սպասումների հետ՝ ներառյալ տրանսֆերտները: Այս տրամաբանության ներքո տնտեսագետների կողմից կատարված պարզ էկոնոմետրիկական գնահատականները ցույց են տալիս, որ տրանսֆերտների ազդեցությունը սպառման, ներդրումների, ներմուծման և համախառն թողարկման վրա փոփոխվում է ժամանակի ընթացքում և երկրների միջև:

Տրանսֆերտների կարճաժամկետ ազդեցությունների մեկ այլ այլընտրանքային մոդել է հանդիսանում Մանդել-Ֆլեմինգի մոդելը (բաց տնտեսություն ֆիքսված գներով և խառը ապրանքներով): Այս մոդելի ներքո տրանսֆերտների ազդեցությունը ՀՆԱ-ի վրա կախված է կապիտալի մոբիլության աստիճանից և փոխարժեքի ռեժիմից: Դիտարկենք կապիտալի մոբիլության դեպքը. ազատ լողացող փոխարժեքի ռեժիմի պայմաններում ՀՆԱ հավասարակշիռ մակարդակը ամբողջովին որոշվում է փողի շուկայով, այդպիսով չազդվելով տրանսֆերտներից: Տրանսֆերտների աճը կարող է խթանել ծախսերը, սակայն վերջինիս ազդեցությունը ամբողջովին փոխհատուցվում է փոխարժեքի արժևորմամբ: Հակառակ դեպքում՝ ֆիքսված փոխարժեքի ռեժիմի պարագայում վճարային հաշվեկշռի հաշվեկշռվածությունը ձեռք է բերվում փողի առաջարկի փոփոխություններով: Փաստորեն միայն այս դեպքում է, որ տրանսֆերտները կարող են հանգեցնել ազգային եկամտի աճին: Մանդել-Ֆլեմինգի մոդելը առաջարկում է բավականին պարզ կառուցվածք, ինչը դիտարկում է վճարային հաշվեկշռի սահմանափակումների և կարճաժամկետ

մակրոտնտեսական շոկերի միջև տարբեր փոխազդեցությունները: Պահանջարկի ցանկացած շոկի ընդհանուր ազդեցությունը կախված է կապիտալի մոբիլությունից և փոխարժեքի ռեժիմից:

Եվ վերջապես կարճաժամկետ ժամանակակից մակրոտնտեսագիտություն, որտեղ ցանկացած ծախսային շոկի (որը բխում է տրանսֆերտներից) ազդեցությունը ՀՆԱ-ի վրա կախված է աշխատավարձերի և գների ճկունության աստիճանից, որտեղ սպասումները առանցքային դեր են կատարում: Եթե ծախսային շոկերն ամբողջապես կանխատեսելի են աշխատավարձ սահմանողների կողմից, ապա այս պարագայում տնտեսական ակտիվության վրա ազդեցությունը կախված է գների և աշխատավարձերի ճկունության աստիճանից: Եթե գների կոշտությունները բացակայում են, ապա այս դեպքում իրական թողարկման վրա ազդեցությունը բացակայում է (միայն անսպասելի շոկերը կարող են առաջացնել թողարկման բնական մակարդակից շեղումներ): Գների և աշխատավարձերի քիչ ճկունության պարագայում, իրական թողարկման վրա կարող են ունենալ ժամանակավոր ազեցություններ:

Առևտուր, հարաբերական գներ և բարեկեցություն


Տրանսֆերտների ազդեցությունը դիտարկելու համար կիրառվում է միջազգային առևտրի տեսությունը՝ գների ճկունության և լրիվ զբաղվածության պայմաններում: Վերջինս տնտեսագիտության մեջ հայտնի է որպես տրանսֆերտների պարադոքս անվանմամբ: Էությունը կայանում է նրանում, որ տրանսֆերտ ստացող երկրի առևտրի պայմանները վատանում են, երբ այդ երկրի ներմուծման սահմանային հակվածությունը մեծ է, այդպիսով տրանսֆերտների քիչ էֆեկտիվության հնարավորություն է առաջանում, եթե առևտրի պայմանների ազդեցությունը գերակշռում է եկամտի դրական ազդեցությանը: Այնուամենայնիվ՝ այն պայմանները, որոնք անհրաժեշտ են տրանսֆերտների քիչ արդյունավետության (impoverishing transfers) տեղի ունենալու համար խիստ սահմանափակ են, և այն մոտեցումը, որ տրանսֆերտ ստացող երկիրը շահում է, մեծապես մնում է անժխտելի:

Առևտրի տեսությունները, որոնք ներառում են տրանսֆերտների գործոնը հիմնականում հիմնված են հոմոգեն տնտեսվարող սուբյեկտներով մոդելների վրա: Այս մոդելներում միջազգային տրանսֆերտների ազդեցությունը բարեկեցության վրա էապես կախված է տրանսֆերտ ստացողների առանձնահատկություններից: Դիտարկենք հետևյալ դեպքը, երբ ունենք փոքր բաց տնտեսություն արտադրության երկու գործոններով (կապիտալ և աշխատուժ), որոնք կատարյալ մոբիլ են արտահանելի և ոչ արտահանելի ճյուղերի միջև: Տնտեսվարող սուբյեկտներն ունեն միևնույն հոմոթետիկ նախընտրությունները: Ռիվերա-Բատիզը (1982) ցույց են տվել, որ միգրացիան՝ առանց տրանսֆերտների, բացասաբար է ազդում մնացած ռեզիդենտների բարեկեցության վրա, երբ երկրի կապիտալ/աշխատուժ հարաբերությունը փոխվում է: Սա

բացատրվում է այն հանգամանքով, որ երկրում ոչ միգրանտ ռեզիդենտները զրկվում են ոչ արտահանելի շուկայում միգրանտների հետ առևտրի հնարավորությունից: Quibra (1997) ցույց է տվել, որ միգրացիայի հետևանքով մնացած ռեզիդենտների ոչ բոլոր կատեգորիաներն են ազդվում համանման ձևով: Այսինքն լինում են և շահողներ, և վնաս կրողներ, որտեղ համընդհանուր բարեկեցության վրա ազդեցությունը կախված է սոցիալական բարեկեցության ընտրված ֆունկցիայից: Այնուամենայնիվ, միգրացիան մշտապես բարելավում է բարեկեցությունը, եթե այն ուղեկցվում է բավականաչափ տրանսֆերտներով:

Djajic (1986) վերլուծությունում նույնպես առնացքային տեղ է զբաղեցնում տարանջատումը օգտվողների և շահողների միջև: Տարանջատվում են երկու տարբեր խմբեր՝ տրանսֆերտ ստացող և նրանք ովքեր չեն ստանում տրանսֆերտ, և տրամաբանությունը կայանում է նրանում, որ տրանսֆերտ ստացողն է օգտվում, մինչդեռ նրանք ովքեր չունեն տրանսֆերտ ստանալու հնարավորություն նրանց վիճակը վատանում է: Սակայն վերլուծությունում ցույց է տրվել, որ անգամ նրանք ովքեր չեն ստանում տրանսֆերտ օգտվում են այն դեպքում, երբ տրանսֆերտների ծավալները բավականին մեծ են, ինչն ապահովում է լրացուցիչ պահանջարկ ոչ արտահանելի ապրանքների նկատմամբ տրանսֆերտ ստացողների կողմից: Արդյունքում՝ ոչ արտահանելի ապրանքների հարաբերական գների աճը խթանում է տրանսֆերտ չստացողների բարեկեցությունը:

Մոդելի գրաֆիկական ներկայացումը.



Այստեղ ենթադրվում է այն դեպքը, որտեղ ոչ արտահանելի ապրանքների զուտ առաջարկողները տրանսֆերտ չստացող ռեզիդենտներն են: AA-ն արտադրական հնարավորությունների կորն է նախքան միգրացիան: Տնտեսվարող սուբյեկտների

նախասիրությունների ներքո տնտեսության հավասարակշռության կետը հաստատվում է E կետում՝ անտարբերության և արտադրական հնարավորությունների կորերի հատման կետում: Այժմ ենթադրենք տեղի է ունենում միգրացիա. արտադրական հնարավորությունների կորը տեղաշարժվում է դեպի BB: Հաստատուն գների պայմաններում արտահանելի և ոչ արտահանելի ապրանքների արտադրության նոր լուծումը կգտնվի D կետում, մինչդեռ օպտիմալ սպառման հավաքածուն կգտնվի K կետում՝ պահպանելով մնացած ռեզիդենտների սպառումը (օգտակարությունը) հաստատուն: Սակայն K կետը հավասարակշռության կետ չէ, քանի որ այն բնութագրվում է արտահանելի ապրանքների նկատմամբ ավելցուկային պահանջարկով (մնացած ռեզիդենտները ցանկանում են փոխանակել ոչ արտահանելի ապրանքների DF միավորը արտահանելի ապրանքների FK միավորով): Արդյունքում ոչ արտահանելի ապրանքների հարաբերական գները նվազում են. ռեզիդենտների բարեկեցությունը նույնպես նվազում է (օրինակ՝ G կետը կարող է հանդիսանալ նոր հավասարակշռության կետ):

Պարզենք, թե ինչ տեղի կունենա միգրանտների կողմից տրանսֆերտ ուղարկելու դեպքում: Ենթադրենք արտահանելի ապրանքների DH միավոր փոխանցվում է միգրանտների բարեկամներին: Հաստատուն գների պայմաններում այն հնարավորություն է տալիս նրանց սպառելու արտահանելի և ոչ արտահանելի ապրանքներ նախքան միգրացիայի համամասնությամբ՝ փոխանակելով արտահանելի ապրանքների DJ միավորը ոչ արտահանելի ապրանքների JK միավորով տրանսֆերտ չստացող ռեզիդենտների հետ: Սա կարող է ձեռք բերվել նախքան միգրացիան գների մակարդակի պայմաններում, ինչը տալիս է K օպտիմալ հավաքածուն: Եվ եթե փոխանցումների ծավալը ճիշտ DH միավոր է, ապա այս դեպքում հարաբերական գների կառուցվածքը և մնացած ռեզիդենտների օգտակարության մակարդակը մնում են հաստատուն: Տրանսֆերտների մեծ ծավալների դեպքում ոչ արտահանելի ապրանքների հարաբերական գները կաճեն՝ հանգեցնելով տրանսֆերտ չստացող ռեզիդենտների օգտակարության բարելավմանը, քանի որ վերջիններս հանդիսանում են ոչ արտահանելի ապրանքների զուտ առաջարկողներ: Այսինքն տրանսֆերտ չստացող սուբյեկտները ստանում են ոչ արտահանելի ապրանքների գների դրական էֆեկտ, իսկ տրանսֆերտ ստացող սուբյեկտները՝ եկամտի դրական էֆեկտ և գների բացասական էֆեկտ, և քանի որ եկամտի էֆեկտը ամենայն հավանականությամբ գերակշռում է գների բացասական էֆեկտը, ապա միգրացիան և ստացվող տրանսֆերտները միասին պարետո-բարելավում են տնտեսվարող բոլոր սուբյեկտների համար: Ընդհանուր առմամբ սա ցույց է տալիս, որ տրանսֆերտների զուտ ազդեցությունը մնացած ռեզիդենտների բարեկեցության վրա կախված է տրանսֆերտների ծավալներից:

Հիմնական քննադատությունը այս տեսակետի այն է, որ տրանսֆերտները դիտարկվում են որպես էկզոգեն միգրացիայի տրված մակարդակի պայմաններում: Փորձելով վերլուծել բարեկեցության վրա տրանսֆերտների ազդեցությունը և միգրացիայի (և գործազրկության)

որոշիչները միասնականացված (unified) կառուցվածքում McCormick և Wabba (2000) առաջարկում են մի մոդել որտեղ միգրացիան և տրանսֆերտները որոշվում են համատեղ (jointly): Մոդելով ցույց է տրվում, որ պարամետրերի որոշ արժեքների դեպքում մոդելի լուծումը հանգում է բազմաթիվ հավասարակշռության կետերի, որոնք համապատասխանում են միգրացիայի տարբեր մակարդակներին և դրանց համապատասխան տրանսֆերտների ծավալներին:

4.2. Երկարաժամկետ տեսակետներ.

Անդրադարձ կատարելով վաղ կատարված վերլուծություններին, որտեղ փորձ է արվել բացատրել տրանսֆերտների երկարաժամկետ ազդեցությունները, կարելի է ասել, որ կարծիքները հակասական են: Վերջիններս կենտրոնացված են տրանսֆերտների օգտագործման ուղղությունների վրա (սպառում, թե ներդրում): Մինչև 80-ական թվականները վերլուծությունները հիմնականում «վատատեսական» բնույթի էին և հանգում էին նրան, որ տրանսֆերտների գերակշռող մասն ուղղվում է սպառման ֆինանսավորմանը՝ այդպիսով սահմանափակելով վերջիններիս տնտեսական աճի խթանման դինամիկ ազդեցությունները: Վերլուծությունները կենտրոնացված են եղել նաև «ուղեղների արտահոսքի» բացասական ազդեցության վրա, իսկ վեջիններիս օգուտները դեռևս ակնհայտ չեն եղել: Ըստ տնտեսական աճի ավանդական տեսության միգրացիան բացառապես ունի բացասական ազդեցություն զարգացող երկրների վրա, քանի որ միգրանտների գերակշիռ մասն ունի բարձրակարգ կրթություն: Այդ իսկ պատճառով մտավոր և տեխնիկական այսպիսի ռեսուրսների կորուստը որակվել է որպես «ուղեղների արտահոսք»:

Այնուամենայնիվ՝ միգրացիայի և տնտեսական աճի միջև կապը իրականում ակնհայտ չէ: Առաջին, միգրանտների կայուն հոսքերը կարող են ուղեկցվել տրանսֆերտների ներհոսքի հավասարապես մեծ ծավալներով, ինչը կարող է թուլացնել արտարժութային միջոցների սահմանափակումները տվյալ երկրում: Երկրորդ, միգրանտները կարող են վերադառնալ արդեն իսկ արտադրական նոր հմտություններ ձեռք բերած՝ ունենալով դրական ազդեցություն հետագա տնտեսական աճի զարգացումների վրա: Եվ ինչպես Սթարքն է պնդում, նոր հմտություններ և որակավորում ձեռք բերելու շարժառիթները կարող են ամրապնդվել միգրացիայի հնարավորությունների դեպքում: Անգամ «ուղեղների արտահոսքի» առկայության դեպքում, ներքին տնտեսության միջին կրթական մակարդակը կարող է ավելի բարձր լինել, քան միգրացիայի հնարավորության բացակայության պայմաններում:

Համաձայն այս մոտեցման, բարձր կրթական մակարդակ ունեցող միգրացիան կարող է վերափոխվել օգուտների, անգամ եթե հաշվի չառնենք տրանսֆերտների և միգրանտների

վերադարձի դրական ազդեցությունները: Միևնույն ժամանակ բարձր կրթական մակարդակ ունեցող միգրանտներն առավել մեծ ծավալներով տրանսֆերտների հոսքեր կարող են ապահովել:

Այնուամենայնիվ՝ էմպիրիկ փորձերի արդյունքում բարձր որակավորում ունեցող միգրացիայի դրական ազդեցությունները խիստ սահմանափակ են: Առաջին, առավել բարձր որակավորում ունեցող միգրանտները կարող են ունենալ թույլ կապեր իրենց երկրի հետ, քանի որ հավանական է, որ նրանք իրենց ընտանիքը նույնպես կտեղափոխեն՝ այդպիսով անգամ նվազեցնելով տրանսֆերտների հնարավոր ծավալները: Բացի դա պոտենցիալ միգրանտները այլ երկրում հաստատվելու հավանականությունը մեծացնելու նպատակով կփորձեն իրենց ուսումը շարունակել արտերկրում[7]:

Սակայն «վատատեսական բնույթի» վերլուծություններից բացի կան նաև այնպիսի վերլուծություններ, որտեղ բերվում են առավել լավատեսական մոտեցումներ[8]: Միգրացիայի երկարաժամկետ օգուտները պայմանավորվում են միգրանտների վերադարձով և դրա արդյունքում բիզնես կապերի հաստատմամբ:

Stark (1978) իր վերլուծությունում դիտարկում է տրանսֆերտների առավել լավատեսական մոտեցում՝ ցույց տալով, որ վերջիններիս բացասական ազդեցությունները հաճախ այնքան էլ պարզ չեն կամ գերագնահատված են, և իրականում տրանսֆերտները հաճախ ուղղվում են ներդրումների, հատկապես գյուղատնտեսության ճյուղում: Բացի դա տնային տնտեսությունների մյուս անդամները իրենց ապահովագրված զգալով, կարող են իրականացնել տարբեր գործունեություններ (անգամ ռիսկային) տրանսֆերտների անմիջական պահանջ չներկայացնելով:

1980-ականներին տնտեսական աճի վրա տրանսֆերտների երկարաժամկետ ազդեցության բանավեճի անկյունաքարը ներդրումներից (արտադրողականությունից) տեղափոխվեց եկամուտների բաշխվածությանը: Այսպիսի վերլուծություններում շեշտադրումը դրվում էր այն հանգամանքի վրա, որ տրանսֆերտներն իրականում նպաստում են եկամուտների հավասարաչափ բաշխմանը և լիկվիդային միջոցների սահմանափակումների վերացմանը՝ այդպիսով խթանելով ներդրումներն արտադրական ոլորտներում, մարդկային կապիտալում:

Աղքատություն և եկամուտների անհավասարություն.

Այն հարցադրումը, թե արդյոք տրանսֆերտները հանգեցնում են աղքատության կրճատմանը, եղել է քննարկումների առարկա քաղաքականության շրջանակներում: Օրինակ որոշ

[7] Riccardo Faini (2003) Is the brain drain an unmitigated blessing?, United Nations University, World institute for development economics research.
[8] Տես Stark and Helmenstain (1997)

վերլուծություններ, հիմնվելով վիճակագրական փաստերի վրա, պնդում են, որ տրանսֆերտների ազդեցությունը աղքատության կրճատման վրա շատ փոքր է, քանի որ շատ երկրներում աղքատ խավը ստանում է տրանսֆերտների միայն փոքր մասնաբաժին: Այնուամենայնիվ, գոյություն ունեցող այլ վերլուծություններ ենթադրում են, որ տրանսֆերտները միանշանակ կրճատում են աղքատությունը, սակայն վերջիններիս ազդեցության չափը փոքր է և պայմանավորված է աղքատության չափման մեթոդից:

Աղքատության վրա տրանսֆերտների ազդեցությունը հասկանալու համար անհրաժեշտ է հասկանալ, թե տրանսֆերտները ինչպես են ազդում եկամուտների բաշխվածության վրա: Տեսականորեն այդ փոխկապվածությունը պետք է դիտարկել որպես դինամիկ գործընթաց՝ սկզբնական շրջանում անհավասարության աճի գործընթացից դեպի վերջինիս նվազում ժամանակի ընթացքում: Rapoport (2004) պնդում է, որ նոր միգրացիոն հոսքերի սկզբնական շրջանում գործառնական ծախսերը սովորաբար բարձր են, և ենթադրում են, որ լիկվիդայնության սահմանափակումների պայմաններում միայն բարձր եկամուտ ունեցող սուբյեկտները կարող են տեղափոխվել: Միգրանտների քանակի ավելացմանը զուգընթաց, այնուամենայնիվ միգրացիոն ծախսերը աստիճանաբար կրճատվում են՝ այդպիսով հնարավորություն տալով ցածր եկամուտ ունեցողներին նույնպես ներգրավվել այդ գործընթացում: Վերջինս պայմանավորված է այն հանգամանքով, որ միգրացիոն ծախսերը ներառում են ոչ միայն տրանսպորտային ծախսեր, այլ նաև տեղեկատվական ծախսեր այս կամ այն տեղանքը ընտրելու, աշխատանքի փնտրման ծախսեր և այլն: Տեղեկատվական այսպիսի ծախսերը աստիճանաբար կրճատվում են միգրացիոն կապերի ընդլայնմանը զուգընթաց: Արդյունքում ցածր եկամուտ ունեցողների ներառումը միգրացիոն գործընթացին հանգեցնում է եկամուտների անհավասարության կրճատմանը:

Հիմնական քննադատությունը այս մոտեցման կայանում է այն հանգամանքում, որ տրանսֆերտները դիտարկվում են որպես էկզոգեն, ինչն ուղղակիորեն ավելացվում է տնային տնտեսությունների ընթացիկ եկամտին: Սակայն այլընտրանքային վերլուծություններում առաջ է քաշվում այն մոտեցումը, որ տրանսֆերտները պետք է դիտարկել որպես աշխատուժի եկամտի փոխարինիչ, ինչը կարող էր ձեռք բերվել միգրացիայի բացակայության դեպքում:

Մեկ այլ վերլուծությունում առավել ընդհանրացված մոտեցում է ցույց է տրվել, որտեղ գնահատվել է դրական փոխկախվածություն մեկ շնչին ընկնող եկամտի աճի և տրանսֆերտ ստացող տնային տնտեսությունների քանակի միջև[9] (այն համայնքներում, որտեղ տրանսֆերտ ստացողների կշիռը համեմատաբար մեծ է ունեն մեկ շնչին ընկնող եկամտի առավել բարձր աճ):

Աշխատուժի շուկա.

[9] Տես Unger (2005)

Հաջորդ հարցադրումը վերաբերում է աշխատուժի շուկայի վրա տրանսֆերտների ազդեցությանը: Տրանսֆերտների ուղղակի ազդեցությունը աշխատուժի շուկայի վրա հանգում է տնտեսվարող սուբյեկտների աշխատուժի շուկային մասնակցելու որոշումների կայացմանը, և գործազրկության մակարդակը կարող է աճել, երբ տրանսֆերտները տնային տնտեսությունների կողմից դիտարկվում են որպես բարեկեցության ապահովման վճար (բարոյական ռիսկի խնդիր): Եվ երկրորդ, տրանսֆերտները կարող են կրճատել վարկային սահմանափակումները զարգացող երկրներում՝ այդպիսով խթանելով ներդրումները: Զբաղվածության վրա ընդհանուր ազդեցությունը կախված է այն հանգամանքից, թե նշված ազդեցություններից որը կգերակշռի:

Գոյություն ունեն նաև պահանջարկով պայմանավորված անուղղակի ազդեցություններ: Օրինակ՝ շատ վերլուծություններում ցույց է տրվում, որ տրանսֆերտներով պայմանավորված ոչ արտահանելի ապրանքների սպառման աճը, հատկապես բնակարանների ձեռքբերմանն ուղղված ծախսերի, հանգեցնում է շինարարության ճյուղում զբաղվածության ավելացմանը:

Տրանսֆերտների և գործազրկության միջև փոխազդեցությունը ստուգվել է մի շարք զարգացող երկրների համար[10]: Այս վերլուծությունում ցույց է տրվել, որ տրանսֆերտներն ունեն փոքր բացասական ազդեցություն գործազրկության վրա, սակայն այն նշանակալի չէ, ինչը ենթադրում է, որ վերը նշված երկու ազդեցությունները փոխհատուցում են մեկը մյուսին: Իսկ ներդրումների վրա տրանսֆերտների ազդեցության էկոնոմետրիկական գնահատման արդյունքները փաստում են, որ ներդրումների վրա ազդեցությունը գործնականում նշանակալի է:

Funkhouser (1992) իր վերլուծությունում որոշ երկրների համար պարզել է, որ տրանսֆերտները նշանակալիորեն նպաստում են աշխատուժի շուկայում կանանց մասնակցության կրճատմանը, ինչպես նաև տղամարդկանց՝ թեև ավելի փոքր չափով: Բացի դա տրանսֆերտները մեծացնում են ինքնազբաղվածության ստեղծման հավանականությունը:

Chami, Fullenkamp and Jahjah (2003) կառուցել են միասնական (unified) մոդել՝ դիտարկելով տրանսֆերտների պատճառները և ազդեցությունները տնտեսության վրա: Մոդելի հիմքում դնելով ալտրուիզմը ցույց է տրվել, որ տրանսֆերտները նպատակաուղղված են փոխհատուցելու վատ տնտեսական պայմանները, ինչպես նաև ստեղծում են բարոյական ռիսկի շարժառիթներ, քանի որ տրանսֆերտները տեղի են ունենում ասիմետրիկ ինֆորմացիայի և տնտեսական անորոշությունների պայմաններում: Եվ եզրահանգումը այն է, որ տրանսֆերտները բացասականորեն են ազդում տնտեսական աճի վրա և չեն կարող հանդես գալ որպես կապիտալի էական աղբյուր տնտեսական զարգացման համար: Տնտեսական աճի և տրանսֆերտների միջև բացասական կախվածության միակ հնարավոր մեխանիզմը բարոյական ռիսկի խնդիրն է: Տրանսֆերտներից կախվածությունը հանգեցնում է նրան, որ տրանսֆերտ ստացողը օգտագործում

[10] Տես Stephen Drrinkwater, Paul Levine, Emanuela Lotti “The labour market effects of remittances” Hamburg Institute of International Economics, 2003

է այն որպես աշխատուժից եկամտին փոխարինող և նվազեցնում աշխատելու ջանքերը: Եվ վերջինիս ընդհանուր ազդեցությունը տնտեսական ակտիվության վրա կարող է լինել բավականին նշանակալի:

Մարդկային կապիտալ.

Հաջորդ կարևոր հարցադրումը վերաբերում է մարդկային կապիտալում ներդրումների աճի վրա տրանսֆերտների ունեցած ազդեցությանը: Այս հարցի պատասխանը կարևորվում է այն առումով, որ դրամական փոխանցումներն ազդում են ոչ միայն ընթացիկ բարեկեցության վրա, այլև այն թույլ է տալիս հետագա սերունդներին հաղթահարել աղքատության շրջանը և բարելավել երկրի տնտեսական աճի զարգացումները:

Դրամական փոխանցումները կարող են բարելավել կրթական որակը (outcome), քանի որ վերջիններս թուլացնում են եկամուտների սահմանափակումները, որոնք զսպում են մարդկային կապիտալում օպտիմալ ներդրումները: Այսինքն՝ միգրացիայի հնարավորությունը կրթությունը դարձնում է շահութաբեր ներդրում ընտանիքի համար: Այդպիսով միգրացիան նպաստում է մարդկային կապիտալի ձևավորմանը՝ նվազեցնելով կրթված անհատների արտահոսքը երկրից[11]:

Տրանսֆերտներ, ժամանակավոր միգրացիա և ձեռնարկատիրություն.

Միգրացիային և ձեռնարկատիրությանը վերաբերող էմպիրիկ վերլուծությունների հիմնական մասը կենտրոնացված է ժամանակավոր միգրանտների վերադարձին և ձեռք բերված միջոցների օգտագործման ուղղություններին: Այստեղ տրանսֆերտները որպես ներդրումների շարժառիթ որոշված է ի սկզբանե՝ որպես ժամանակավոր միգրացիայի շարժառիթ: Վերջինս հատկապես ցածր եկամուտ ունեցողներ տնային տնտեսությունների վարկային շուկաներին մուտքի սահմանափակ հնարավորությունների հետևանք է: Այսինքն այս դեպքում տրանսֆերտները որպես ներդրումների շարժառիթ ածանցվում են միգրացիայի շարժառիթներից:

Քանի որ զարգացող շատ երկրների առանձնահատկություններից մեկը հանդիսանում է ինքնազբաղվածության ապահովումը, փորձը ցույց է տալիս, որ վարկային շուկաների մասնակցությունը փոքր բիզնեսի ֆինանսավորմանը փոքր է: Օրինակ՝ Mesnard (2004) ցույց է տալիս, որ 1980-ականներին Թունիսում միգրանտների կողմից փոքր ձեռնարկատիրական ծրագրերի 87%-ն ամբողջովին ֆինանսավորվել է արտերկրում կուտակված խնայողությունների հաշվին:

[11] Գրականության մեջ բերվում է նաև «ուղեղների արտահոսքից» օգուտների հնարավորությունը:

Նշված իրականությունը փաստում են նաև Dustmann and Kirchkamp (2002), որտեղ ցույց է տրվել, որ ուսումնասիրության մեջ ընդգրկված Թուրքիայի միգրանտների 50%-ը 80-ական թվականներին հիմնել են իրենց սեփական բիզնեսը արտերկրում կուտակած խնայողությունների հաշվին: Արդյունքները ցույց են տվել, որ արտերկրում աշխատավարձերի աճն ամենայն հավանականությամբ կրճատում է միգրացիայի տևողությունը նրանց համար ովքեր ի սկզբանե ձեռնարկատիրությամբ զբաղվելու նպատակ են ունեցել:

Մեկ այլ ուղի, որով տրանսֆերտները կարող են նպաստել խնայողությունների ձևավորմանը բնակարաններում ներդրումներ կատարելու միջոցով է: Parrado (2004) դիտարկում է տրանսֆերտների ազդեցությունը սեփականության ձեռքբերման վրա Մեքսիկայում: Հեղինակը նշում է, որ հիմնական գործոնը, որը սահմանափակում է սեփականության ձեռքբերումը Մեքսիկայում, ինչպես նաև թույլ զարգացած շատ երկրներում, վարկային միջոցների շուկային մուտքի սահմանափակումներն են կամ մուտքի հնարավորությունը, սակայն բարձր տոկոսադրույքներով: Վերջինս էլ ցածր և միջին եկամուտ ունեցողների համար խոչընդոտ է հանդիսանում վարկերի ձեռքբերման գծով, հատկապես այն տնային տնտեսությունների համար, որոնք չեն տնօրինում որևէ ակտիվներ, ինչը կարող է օգտագործվել որպես գրավ: Նշված հանգամանքների ներքո, միգրացիան կարելի ընդունել որպես անհրաժեշտ կապիտալի կուտակման ռազմավարություն անշարժ գույքի ձեռքբերման համար: Բացի դա նշված վերլուծությունում ցույց է տրվել, որ միգրացիան մեծացնում է բնակարանների ձեռքբերման հավանականությունը բանկային վարկերի միջոցով:

5. Տրանսֆերտների միկրոորոշիչները Հայաստանում

Նախքան Հայաստանի օրինակը ներկայացնելը, նորից անդրադարձ կատարենք տրանսֆերտների շարժառիթներին վերաբերող գրականությանը և ընդհանուր գծերով ներկայացնենք այն: Տրանսֆերտներին վերաբերող գրականությունն առաջարկում է շարժառիթների մի շարք տեսակներ (դրանք բավականին մանրամասն ներկայացված են նյութի սկզբում), որոնք կարելի է ընդհանրացնել երեք մեծ կատեգորիաների՝ մաքուր ալտրուիզմ (pure altruism), չափավոր ալտրուիզմ (tempered altruism) և մաքուր եսասիրական շարժառիթներ (self-interest motive): Վերջինս ներառում է միգրանտի և տնային տնտեսության միջև ցանկացած տիպի ոչ ֆորմալ պայմանագրեր (ապահովագրություն, նախկինում վերցրած վարկերի վերադարձ): Տրանսֆերտների վարքագիծը մոդելավորելու տեսանկյունից ասում ենք, որ միգրանտը ալտրուիստական շարժառիթներով է գործում, եթե վերջինիս օգտակարության ֆունկցիայի մեջ ներառված է նաև տնային տնտեսության օգտակարության ֆունկցիան. միգրանտն իր որոշումներն ընդունելուց հաշվի է առնում նաև տնային տնտեսության շահերը: Այս դեպքում տրանսֆերտները պետք է ավելանան միգրանտի եկամտի աճին զուգահեռ և նվազեն տնային տնտեսության եկամտի աճին զուգահեռ[12]:

Հակառակ ալտրուիզմի, մաքուր եսասիրական շարժառիթների ներքո միգրանտը իրականացնում է ներդրումներ ապագայի համար: Այս դեպքում տնային տնտեսությունը կարող է հանդիսանալ որպես վստահելի և տեղեկացված գործընկեր: Այս տեսության ներքո տրանսֆերտներն ավելանում են տնային տնտեսության և միգրանտի ակտիվների ու եկամտին զուգահեռ:

Եվ չափավոր ալտրուիզմի դեպքում, ինչպես արդեն նշվել է, միգրանտը և ընտանիքի անդամները երկուստեք շահում են միգրացիայից ոչ բացահայտ պայմանագրերի միջոցով:

Հաճախ ալտրուիստական և եսասիրական շարժառիթները կարող են միաժամանակ որոշել տրանսֆերտների վարքագիծը և անգամ լինել փոխլրացնող[13]: Շատ հեղինակներ եզրահանգում են, որ ալտրուիզմը ապահովում է միգրանտի և տրանսֆերտ ստացողի միջև ոչ ֆորմալ կամ ոչ բացահայտ պայմանագրերի կատարումը:

Եսասիրական շարժառիթներին վերաբերող գրականությունը տարանջատում է տրանսֆերտների իրականացման հետևյալ հիմնական ուղղորդիչները. տեղաբաշխել ռիսկերը տրանսֆերտ կատարող և ստացող միավորների միջև, ստանալ ժառանգություն, հարթել սպառումը, թուլացնել կապիտալի սահմանափակումները, կուտակել ակտիվներ հայրենի երկրում, վճարել

[12] Տե՛ս Funkhouser 1995, "Remittances from international migration: a comparison of El Salvador and Nicaragua," Review of economics and statistics, 77, 1:137-46.
[13] van Dalen, H.P., G. Groenewold, and T. Fokkema, 2005, " The effect of remittances on emigration intentions in Egypt, Morûcco, and Turkey", population studies 59(3): 375-392

միգրացիոն և կրթության ծախսերը, վճարել տնային տնտեսության կողմից մատուցվող ծառայությունների դիմաց, խթանել կամ զսպել միգրացիան հայրենի երկրից:

Այնուամենայնիվ, իրականության մեջ տրանսֆերտների վարքագիծն ուղղորդվում է տարբեր շարժառիթների համատեղ իրականացմամբ, ինչը կախված է սոցիալական և տնտեսական գործոններից, որոնք տարբերվում են երկրների միջև, ինչպես նաև արտահայտվում են անհատների վարքագծում:

Տրանսֆերտների էմպիրիկ որոշիչները

Աշխատուժի միգրացիայի նոր տնտեսագիտության մոտեցումները մեծ ուշադրություն են դարձնում տրանսֆերտներ կատարելու որոշումների և տրանսֆերտների ծավալների վրա: Այն գործոնները, որոնք ազդում են տրանսֆերտ կատարելու հավանականության և տրանսֆերտների ծավալների վրա, ներառում են ինչպես միգրանտի, այնպես էլ տնային տնտեսությանը վերաբերող բնութագրերը: Մասնավորապես, որոշ տնտեսագետներ ենթադրում են, որ բարձրագույն կրթությամբ միգրանտները հավանաբար կուղարկեն քիչ տրանսֆերտ, որովհետև վերջիններիս միգրացիան հաճախ կրում է երկարաժամկետ է, եթե ոչ մշտական բնույթ[14]: Ընտանիքի հետ ամուր կապերը կարող են խթանել ինչպես եսասիրական, այնպես էլ ալտրուիստական շարժառիթները և կարող են ունենալ տարբեր վարքագծային դրսևորումներ երկրների միջև: Նմանապես, տրանսֆերտ ստացող տնային տնտեսությունների եկամտի մակարդակը կարող է հանդիսանալ տրանսֆերտների հիմնական որոշիչը[15]: Միգրացիայի գրականության մեջ վերլուծություններ կան, որտեղ ենթադրվում է, որ տնային տնտեսության եկամտի և տրանսֆերտների միջև կապը գծային չէ:

Մի շարք վերլուծություններ ենթադրում են փոխկախվածություն միգրացիայի տևողության աճի և տրանսֆերտներ իրականացնելու հավանականության միջև: Համաձայն տրանսֆերտների ուշացման հիպոթեզի (Remittance Decay Hypothesis) միգրանտի արտերկրում գտնվելու ժամանակահատվածի աճին զուգահեռ վերջիններիս տրանսֆերտ ուղարկելու հակվածությունն աստիճանաբար թուլանում է: Այս փոխկախվածությունը հավանաբար ոչ գծային է, մի կողմից արտացոլելով միգրանտի փորձառության աճը արտերկրի աշխատուժի շուկայում (հետևաբար նաև եկամտի աճը), և մյուս կողմից ընտանեկան կապերի աստիճանական թուլացումը ժամանակից կախված (հետևաբար նաև տրանսֆերտների ծավալների աստիճանական կրճատումը):

ՀՀ տրանսֆերտների միկրոորոշիչների հավասարման գնահատման համար կօգտագործենք 2006թ. ՀՀ տնային տնտեսությունների կողմից արտերկրներից ստացված

[14] Տես Riccardo Faini, "Is the brain drain an unmitigated blessing?", Discussion Paper No.2003/64, UNU/WIDER.

[15] Osili, U. O., 2007, "Remittances and Savings from International Migration: Theory and Evidence Using a Matched Sample," Journal of Development Economics 83: 446–465.

դրամական փոխանցումների հարցման միջհատվածային տվյալները (cross-sectional data): Նշված հարցումներն իրականացվել են 2007թ. ՀՀ ԿԲ կողմից Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ:

Գնահատման էկոնոմետրիկական մեթոդ ընտրվել է Ordered Logit, որը *թույլ է տալիս գնահատել տրանսֆերտների ծավալների հավանականության վրա ազդող գործոնները:*

Հավասարման մեջ ընտրված փոփոխականները և վերջիններիս առանձնահատկությունները.

Rem-3 – տրանսֆերտների ծավալները, ինչը հանդիսանում է որպես կախյալ փոփոխական: Հարցումների բազայում տրանսֆերտների ծավալները տրված են 9 միջակայքային խմբերով՝ 1. տարեկան մինչև 500 ԱՄՆ դոլար, 2. 500-1000 ԱՄՆ դոլար տարեկան, 3. 1001-2000 ԱՄՆ դոլար տարեկան, 4. 2001-3000 ԱՄՆ դոլար տարեկան, 5. 3001-5000 ԱՄՆ դոլար տարեկան, 6. 5001-7000 ԱՄՆ դոլար տարեկան, 7. 7001-10000 ԱՄՆ դոլար տարեկան, 8. 10000-15000 ԱՄՆ դոլար տարեկան, 9. 15001 ԱՄՆ դոլար տարեկան և ավել: Պայմանականորեն նշված 9 խմբերը համախմբվել են 3 խմբերի մեջ՝ հաշվի առնելով վերջիններիս բաշխվածությունը խմբերի միջև: Մինչև 500 ԱՄՆ դոլար ուղարկողները դասակարգվել են որպես ցածր ծավալի տրանսֆերտ ուղարկողներ և ներառվել 1 խմբի մեջ, 2-3-4 խմբերը դասակարգվել են որպես միջին ծավալի տրանսֆերտ ուղարկողներ և ներառվել 2 խմբի մեջ, իսկ 5-9 խմբերը համարվել են մեծ ծավալի տրանսֆերտ ուղարկողներ և ներառվել 3 խմբի մեջ:

hh-size – տրանսֆերտ ստացող տնային տնտեսության անդամների քանակը: Այստեղ ենթադրվում է, որ որքան մեծ է ընտանիքը այնքան մեծ կլինի տրանսֆերտի ծավալը: Սակայն գոյություն ունի նաև հակառակ տարբերակը, որը պնդում է, որ որքան մեծ է ընտանիքը, այնքան ցածր է հավանականությունը, որ միգրանտը տրանսֆերտ կուղարկի[16]: Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ մեծ ընտանիքները կարող են ունենալ առավել շատ հնարավորություններ բաշխելու եկամուտների կորստի հնարավոր ռիսկերը: Այդ իսկ պատճառով այնքանով, որքանով տրանսֆերտները հանդիսանում են ռիսկերի բաշխման ոչ ֆորմալ պայմանագրեր, մեծ ընտանիքներին տրանսֆերտ կատարելու հակվածությունը փոքրանում է:

unemp – տնտեսության աշխատունակ անդամներից գործազուրկների քանակը: Սա ենթադրում է, որ այսպիսի ընտանիքներում եկամտի մակարդակը ցածր է, ուստի ալտրուիզմի ներքո միգրանտը պետք է ավելի շատ տրանսֆերտ ուղարկի: Իսկ փոխանակման շարժառիթի ներքո (եսասիրական շարժառիթ) գործազուրկների մեծ քանակը միգրանտին սակարկելու առավելություն և հնարավորություն է տալիս, ինչն էլ նվազեցնում է մեծ ծավալներով տրանսֆերտ կատարելու հավանականությունը:

[16] Brown, Richard P.C., "Estimating Remittance functions for Pacific Island migrants", World development, 25, pp. 613-626, 1997.

n-remitters – տնային տնտեսությանը տրանսֆերտ ուղարկողների քանակը

y-rem – տրանսֆերտների ստացման տարիները

reg – տրանսֆերտների ստացման պարբերականությունը: Վերջինս օգտագործվել է պարզելու համար, թե տրանսֆերտներ կատարելու պարբերականությունը ինչպես է ազդում տրանսֆերտների ծավալների հավանականության վրա (1 ենթադրում է պարբերական բնույթ, 0 հակառակ դեպքում):

m-income – միգրանտի միջին ամսական դոլարային եկամուտը: Նշված փոփոխականը հանդիսանում է գլխավոր փոփոխականներից մեկը, ինչը որոշում է տրանսֆերտների ծավալները: Հարցումների բազայում նշված փոփոխականը բացակայում է, սակայն առկա են միգրանտների աշխատանքը/զբաղմունքը և տնտեսության ոլորտը: Այդ իսկ պատճառով կառուցվել է միգրանտի եկամտին փոխարինող փոփոխական (proxy variable): Քանի որ միգրանտների գերակշիռ մասը՝ մոտավորապես 77%-ը, գտնվում է Ռուսաստանում, այդ իսկ պատճառով Ռուսաստանի տարբեր մասնագիտությունների աշխատավարձերը համարվել են որպես միգրանտների եկամտի մակարդակը բնորոշող ցուցանիշ: Եթե միգրանտի զբաղմունքը չի համընկել տվյալների բազայում առկա որևէ մասնագիտության հետ, պարզապես որպես աշխատավարձին մոտարկող ցուցանիշ վերցվել է համապատասխան տնտեսության ոլորտի միջին աշխատավարձը: Հարկ է նշել, որ օգտագործվել են Ռուսաստանի 2005թ. աշխատավարձերի մակարդակը, քանի որ 2006թ. տարբեր մասնագիտությունների աշխատավարձերը համապատասխան կայքէջում բացակայում են (տես www.ilo.org): Այստեղ կարևորվում է տարբեր մասնագիտությունների համար վճարվող աշխատավարձերի տարբերությունները, ինչը պետք է պայմանավորի միգրանտի ցածր, միջին և մեծ ծավալի տրանսֆերտ ուղարկող խմբի մեջ ընկնելու հավանականությունը: Սակայն այս մեթոդը, փաստորեն, թույլ չի տալիս տարանջատել նույն մասնագիտությամբ աշխատողների միջև եկամուտների տարբերությունները, ինչը փորձել ենք հաշվառել եկամուտները բնորոշող այնպիսի գործոններով, ինչպիսիք են կրթության մակարդակը և միգրացիայի ժամանակահատվածը:

hh-income – տնային տնտեսության 2006թ. տարեկան եկամուտը դոլային արտահայտությամբ: Նշված փոփոխականը գրականության մեջ պայմանավորում է ալտրուիզմի և եսասիրական շարժառիթների միջև կարևորագույն տարանջատումը: Բացասական կախվածությունը խոսում է ալտրուիստական շարժառիթների մասին, իսկ դրական կախվածությունը եսասիրական շարժառիթների ակնառու բնորոշիչներից է: Հաշվի առնելով հարցումների բազայում առկա տնային տնտեսության եկամուտների հնարավոր ոչ հավաստի

լինելը[17]՝ վերջիններս մոտարկվել են տրանսֆերտների տարբեր խմբերի միջիններից և տնային տնտեսության եկամուտներում տրանսֆերտների կշիռներից:

worker – բնութագրում է միգրանտի գործունեությունը արտերկրում՝ 1 եթե վարձու աշխատող է և 0 հակառակ դեպքում:

immediate-member – ցույց է տալիս դրամական փոխանցում ուղարկողի և տնային տնտեսության միջև անմիջական ազգակցական կապը:

age-mig – ցույց է տալիս միգրանտի տարիքը: Վերջինս կարևոր փոփոխական է, ինչը պետք է ներառվի հավասարման մեջ՝ գնահատելու վերջինիս ազդեցությունը տրանսֆերտների ծավալների վրա: Որոշ տնտեսագետներ ենթադրում են, որ տարիքը դրական ազդեցություն ունի տրանսֆերտ կատարելու հավանականության վրա. տարիքով համեմատաբար մեծ անհատները կփոխանցեն ավելի շատ[18]:

high-educ – միգրանտի կրթության մակարդակը (1 եթե ունի բարձրագույն կրթություն և 0 հակառակ դեպքում): Վերջինս օգտագործվում է տրանսֆերտ իրականացնելու հավանականությունը որոշելու համար: Տեսության համաձայն առավել կրթված անհատները կկատարեն առավել մեծ ծավալներով տրանսֆերտ: Հակառակ պնդումը նույնպես տեղի ունի, ինչը ենթադրում է, որ բարձրագույն կրթությամբ անհատները կիրականացնեն քիչ ծավալով տրանսֆերտներ, քանի որ վերջիններիս մշտական միգրացիայի հակվածությունն առավել մեծ է: Ներդրումների շարժառիթների ներքո, տրանսֆերտներն ունեն նախկինում վերցրած վարկերի վերադարձման բաղադրիչ, այդ իսկ պատճառով պետք է կապված լինեն ընտանիքի կողմից կատարված ներդրումների ծավալների հետ, որոնք կատարվել են կրթության և միգրացիայի վրա: Ուստի ենթադրվում է, որ տրանսֆերտների ծավալները կավելանան միգրանտի կրթության հետ մեկտեղ, և բացի այդ հնարավոր է նաև հակադարձ U-աձև փոխկախվածություն տրանսֆերտների և ստացողի եկամտի հետ: ՀՀ դեպքում, քանի որ միգրանտի եկամուտները մոտարկումներ են, ինչը հնարավորություն չի տալիս միևնույն մասնագիտությամբ միգրանտների եկամուտների միջև տարբերությունները հաշվի առնել, այն դիտարկվել է որպես եկամուտները բնորոշող գործոն:

secondary-educ – միգրանտի միջնակարգ կրթությունը՝ 1 եթե միգրանտն ունի միջնակարգ կրթություն և 0 հակառակ դեպքում:

seasonal-worker – ցույց է տալիս, թե տրանսֆերտ ուղարկողը սեզոնային աշխատող է, թե մշտական բնակություն ունեցող: Տեսականորեն սեզոնային աշխատողները ենթադրվում է, որ

[17] Վերջինիս ստուգման համար պարզապես համադրվել են ընդհանուր եկամուտների մեջ տրանսֆերտների կշռով ստացված տրանսֆերտների ծավալները ռեսպոնդենտների կողմից տրանսֆերտների փաստացի պատասխանների հետ: Ադյունքում՝ ստացվել են բազմաթիվ անհամապատասխանություններ:

[18] Rodriguez, E., Horton, S. (1995) "International return migration and remittances in Philippines" Department of economics and institute for policy analyses, University of Toronto.

ժամանակավորապես են լքել երկիրը և վերադառնալու մտադրություն ունեն, հետևաբար եկամտի առավել մեծ մասն են փոխանցում հայրենի երկիր:

town- ցույց է տալիս թե տրանսֆերտ ստացող տնային տնտեսությունը մայրաքաղաքից է, թե ոչ (1 եթե մայրաքաղաքից է, 0 հակառակ դեպքում):

Վերջին երկու տարանջատումները իրականացվել են ստուգելու համար այնպիսի հիպոթեզներ, որ մայրաքաղաքի և մյուս շրջանների բնակիչների, սեզոնային և մշտական բնակություն ունեցող միգրանտների մոտ հնարավոր է գոյություն ունենան տրանսֆերտների տարբեր շարժառիթներ:

Տրանսֆերտների գնահատված հավասարումը ներկայացված է աղյուսակ 2-ում, որտեղ գործակիցները ցույց են տալիս այս կամ այն գործոնի ազդեցության հավանականության ուղղությունը միայն, իսկ գործոնների սահմանային ազդեցությունները ներկայացված են աղյուսակներ 3-5-ում:

Աղյուսակ 2. Տրանսֆերտների հավասարում

Ordered logistic regression Number of obs = 2625
Wald chi2(17) = 801.40
Prob > chi2 = 0.0000
Log pseudolikelihood = -1883.925 Pseudo R2 = 0.2344

rem_3	Coef.	Robust Std. Err.	z	P>z	[95% Conf. Interval]	
m_inc	0.2101	0.0468	4.4900	0.0000	0.1184	0.3017
hh_size	0.0847	0.0221	3.8400	0.0000	0.0414	0.1280
unemprate	0.2324	0.1664	1.4000	0.1630	-0.0938	0.5586
n_remitters	3.2180	0.7799	4.1300	0.0000	1.6894	4.7466
n_remitte~2^2	-0.6440	0.1956	-3.2900	0.0010	-1.0274	-0.2607
reg	1.4517	0.1124	12.9200	0.0000	1.2314	1.6719
worker	-0.2168	0.1236	-1.7500	0.0790	-0.4591	0.0255
immediate_~r	0.8954	0.1102	8.1300	0.0000	0.6794	1.1114
age_mig	-0.0446	0.0216	-2.0700	0.0390	-0.0869	-0.0024
age_mig^2	0.0006	0.0002	2.5900	0.0100	0.0002	0.0011
high_educ	0.6494	0.1949	3.3300	0.0010	0.2674	1.0315
secondary_~c	-0.1751	0.1771	-0.9900	0.3230	-0.5222	0.1721
seazonal_w~r	1.2654	0.1076	11.7600	0.0000	1.0544	1.4763
y_rem	0.1016	0.0211	4.8100	0.0000	0.0602	0.1430
y_rem^2	-0.0027	0.0008	-3.2300	0.0010	-0.0043	-0.0010
hh_inc	-0.4071	0.0397	-10.2500	0.0000	-0.4849	-0.3293
hh_inc^2	0.0311	0.0029	10.8900	0.0000	0.0255	0.0367

Աղյուսակ 3. Սահմանային ազդեցությունները ցածր խմբի տրանսֆերտների համար

Marginal effects after ologit
y = Pr(rem_3==1) (predict, p outcome(1))
= 0.442514

variable	dy/dx	Std.err.	z	P>z	[95%C.I.]		X
m_inc	-0.052	0.012	-4.490	0.000	-0.074	-0.029	2.919
hh_size	-0.021	0.005	-3.830	0.000	-0.032	-0.010	4.460
unempr~e	-0.057	0.041	-1.400	0.163	-0.138	0.023	0.306
n_remi~s	-0.794	0.192	-4.130	0.000	-1.171	-0.417	1.061
n_rem~2^2	0.159	0.048	3.300	0.001	0.064	0.253	1.212
reg*	-0.347	0.024	-14.320	0.000	-0.395	-0.300	0.726
worker*	0.053	0.030	1.770	0.076	-0.006	0.112	0.797
immedi~r*	-0.219	0.026	-8.340	0.000	-0.271	-0.168	0.629
age_mig	0.011	0.005	2.070	0.039	0.001	0.021	43.196
age_mig^2	0.000	0.000	-2.590	0.010	0.000	0.000	1982.52
high_e~c*	-0.156	0.045	-3.470	0.001	-0.244	-0.068	0.288
second~c*	0.043	0.043	0.990	0.321	-0.042	0.128	0.664
seazon~r*	-0.293	0.022	-13.060	0.000	-0.337	-0.249	0.331
y_rem	-0.025	0.005	-4.820	0.000	-0.035	-0.015	5.496
y_rem^2	0.001	0.000	3.230	0.001	0.000	0.001	54.265
hh_inc	0.100	0.010	10.210	0.000	0.081	0.120	2.412
hh_inc^2	-0.008	0.001	-10.820	0.000	-0.009	-0.006	12.942

(*) dy/dx is for discrete change of dummy variable from 0 to 1

Աղյուսակ 4. Սահմանային ազդեցությունները միջին խմբի տրանսֆերտների համար

Marginal effects after ologit
y = Pr(rem_3==2) (predict, p outcome(2))
= 0.5155869

variable	dy/dx	Std.err.	z	P>z	[95%C.I.[		X
m_inc	0.0434	0.0097	4.4700	0.0000	0.0243	0.0624	2.9192
hh_size	0.0175	0.0046	3.7900	0.0000	0.0085	0.0265	4.4602
unempr~e	0.0480	0.0344	1.3900	0.1630	-0.0195	0.1155	0.3058
n_remi~s	0.6647	0.1618	4.1100	0.0000	0.3476	0.9818	1.0606
n_rem~2^2	-0.1330	0.0405	-3.2800	0.0010	-0.2124	-0.0536	1.2122
reg*	0.3010	0.0222	13.5400	0.0000	0.2574	0.3445	0.7261
worker*	-0.0437	0.0243	-1.8000	0.0720	-0.0914	0.0039	0.7966
immedi~r*	0.1863	0.0229	8.1500	0.0000	0.1415	0.2311	0.6290
age_mig	-0.0092	0.0045	-2.0600	0.0390	-0.0180	-0.0005	43.1962
age_mig^2	0.0001	0.0001	2.5800	0.0100	0.0000	0.0002	1982.52
high_e~c*	0.1258	0.0346	3.6300	0.0000	0.0579	0.1937	0.2876
second~c*	-0.0358	0.0358	-1.0000	0.3180	-0.1060	0.0344	0.6644

seazon~r*	0.2282	0.0175	13.0500	0.0000	0.1940	0.2625	0.3307
y_rem	0.0210	0.0044	4.7500	0.0000	0.0123	0.0296	5.4956
y_rem^2	-0.0006	0.0002	-3.2100	0.0010	-0.0009	-0.0002	54.2651
hh_inc	-0.0841	0.0088	-9.5800	0.0000	-0.1013	-0.0669	2.4122
hh_inc^2	0.0064	0.0006	10.0500	0.0000	0.0052	0.0077	12.9422

(*) dy/dx is for discrete change of dummy variable from 0 to 1

Աղյուսակ 5. Սահմանային ազդեցությունները բարձր խմբի տրանսֆերտների համար
Marginal effects after ologit

y = Pr(rem_3==3) (predict, p outcome(3))
= 0.04189909

variable	dy/dx	Std.err.	z	P>z	[95%C.I.]		X
m_inc	0.0084	0.0020	4.2800	0.0000	0.0046	0.0123	2.9192
hh_size	0.0034	0.0009	3.8200	0.0000	0.0017	0.0051	4.4602
unempr~e	0.0093	0.0067	1.3900	0.1640	-0.0038	0.0225	0.3058
n_remi~s	0.1292	0.0325	3.9700	0.0000	0.0655	0.1929	1.0606
$n_rem\sim2^2$	-0.0259	0.0081	-3.2100	0.0010	-0.0416	-0.0101	1.2122
reg*	0.0461	0.0044	10.4800	0.0000	0.0375	0.0547	0.7261
worker*	-0.0092	0.0056	-1.6400	0.1010	-0.0203	0.0018	0.7966
immedi~r*	0.0332	0.0045	7.3300	0.0000	0.0243	0.0420	0.6290
age_mig	-0.0018	0.0009	-2.0700	0.0390	-0.0035	-0.0001	43.1962
age_mig^2	0.0000	0.0000	2.5700	0.0100	0.0000	0.0000	1982.52
high_e~c*	0.0299	0.0106	2.8300	0.0050	0.0092	0.0506	0.2876
second~c*	-0.0072	0.0075	-0.9600	0.3360	-0.0219	0.0075	0.6644
seazon~r*	0.0646	0.0076	8.4800	0.0000	0.0497	0.0795	0.3307
y_rem	0.0041	0.0009	4.7200	0.0000	0.0024	0.0058	5.4956
y_rem^2	0.000	0.000	-3.190	0.001	0.000	0.000	54.265
hh_inc	-0.016	0.002	-9.540	0.000	-0.020	-0.013	2.412
hh_inc^2	0.001	0.000	10.160	0.000	0.001	0.001	12.942


(*) dy/dx is for discrete change of dummy variable from 0 to 1

5.1. Արդյունքների ամփոփում

Այժմ փորձենք մեկնաբանել ՀՀ օրինակով գնահատված հավասարման արդյունքները, ինչը ներկայացված է աղյուսակ 2-ում: Տրանսֆերտների գնահատված հավասարման արդյունքներից կմեկնաբանենք տարբեր գործոնների ազդեցությունների ուղղությունները և եզրահանգումներ կկատարենք, աղյուսակ 1-ում նշված այս կամ այն մոդելին[19] համապատասխանության մասին:

Ինչպես տարբեր մոդելներն են եզրահանգում, ՀՀ դեպքում նույնպես առկա է միգրանտի եկամտի և տրանսֆերտների աճի հավանականության միջև ակնկալվող դրական փոխկախվածությունը, իսկ վերջինիս սահմանային ազդեցությունը ցույց է տալիս, որ միգրանտի տարեկան եկամտի 1000 միավոր աճը 4.3%-ով մեծացնում է հավանականությունը միջին խմբի մեջ ընկնելու (տես աղյուսակ 3), իսկ 0.8%-ով բարձր խմբի մեջ ընկնելու հավանականությունը: Ստորև ներկայացնենք նաև միգրանտի եկամտի և տրանսֆերտների աճի միջև հավանականությունների գրաֆիկը.

Գրաֆիկ 1. Միգրանտի եկամտի և տրանսֆերտների ցածր, միջին և մեծ խմբերի մեջ ընկնելու հավանականության փոխկախվածություն.




Ինչպես երևում է գրաֆիկից միգրանտի եկամտի աճը հանգեցնում է նրան, որ քիչ ծավալի տրանսֆերտ ուղարկողներն աստիճանաբար դառնում են միջին, իսկ այնուհետև՝ որոշակի բարձր եկամտի դեպքում, մեծ ծավալի տրանսֆերտ ուղարկողներ: Նշված վարքագիծը հատուկ է ինչպես ալտրուիստական, այնպես էլ եսասիրական շարժառիթներին:

[19] Մոդելների մանրամասն նկարագրությունը տե՛ս “The Economics of Migrant’s Remittances” Hillel Rapoport and Frederic Docquier, August 2004.

Սակայն, գրականության մեջ որպես հիմնական տարանջատող գործոն դիտարկվում է տնային տնտեսության եկամուտն այլ աղբյուրներից (բացի տրանսֆերտները): Ինչպես երևում է տրանսֆերտների հավասարումից տնային տնտեսության եկամտի և տրանսֆերտների աճի հավանականության միջև գոյություն ունի բացասական փոխկախվածություն: Սա նշանակում է, որ հարաբերականորեն ցածր եկամուտ ունեցող տնային տնտեսությունները ստանում են համեմատաբար մեծ ծավալի տրանսֆերտներ, ինչը ենթադրում է ալտրուիստական կամ ստրատեգիական շարժառիթներ: Իսկ ինչ վերաբերում է սահմանային ազդեցություններին, ապա տնային տնտեսության տարեկան եկամտի 1000 միավոր աճը 10.0%-ով մեծացնում է տրանսֆերտի ցածր խմբի մեջ մնալու հավանականությունը: Միաժամանակ 8.4%-ով և 1.6%-ով նվազում է համապատասխանաբար միջին և բարձր խմբերի մեջ մնալու հավանականությունները:

Գրաֆիկ 2. Տնային տնտեսության եկամտի և տրանսֆերտների տարբեր խմբերի մեջ ընկնելու հավանականության փոխկախվածություն.




Նշված գրաֆիկը փաստում է, որ տնային տնտեսության եկամտի աճին զուգահեռ նվազում են միջին և բարձր խմբերի մեջ մնալու հավանականությունները, փոխարենը մեծանում է հավանականությունը, որ վերջիններս աստիճանաբար կհայտնվեն ցածր խմբի տրանսֆերտ ուղարկողների շարքում: Հետաքրքրական է նաև այն հանգամանքը, որ եկամտի որոշակի մակարդակից բարձր եկամուտ ունեցողները նույնպես ստանում են տրանսֆերտներ (եկամտի քառակուսու գործակիցը դրական է և եկամտի ազդեցությունը U-աձև է), ինչը կարող է խոսել նաև եսասիրական շարժառիթների մասին ևս: Սակայն քանի որ համապատասխան կետերի քանակը քիչ է, այդ իսկ պատճառով համընդհանուր արդյունքները ցույց են տալիս հակադարձ կախվածություն եկամտի և տրանսֆերտների միջև (եկամտի գործակիցը բացասական է):

Հետագայում եսասիրական հիպոթեզների առկայության ստուգման համար կիրականացնենք լրացուցիչ դիտարկումներ ևս՝ 1. թվային բազան տարանջատելով տրանսֆերտ ստացողներին գյուղական և մայրաքաղաքային բնակչության, 2. թվային բազան տարանջատելով սեզոնային և մշտական բնակություն ունեցող միգրանտների, և 3. թվային բազան տարանջատելով ըստ տրանսֆերտների ծախսման ուղղությունների:


Հետաքրքրական արդյունք է ստացվել միգրանտի տարիքից կախված տրանսֆերտների հավանականության մասով: U-աձև կախվածությունը միգրանտի տարիքի և տրանսֆերտների հակվածության միջև ցույց է տալիս, որ երիտասարդները և տարեցները առավել հակված են մեծ ծավալի տրանսֆերտ կատարելու, քան միջին տարիքի միգրանտները: Նշված վարքագիծը հակադրվում է այն հիպոթեզի հետ, որ տարեց միգրանտները պարզապես չեն կարող դրսևորել նույն արտադրողականությունը ինչ երիտասարդները: Ինչ վերաբերում է միջին տարիքի միգրանտներին, ապա վերջիններս ենթադրվում է, որ գերադասում են իրենց այսօրվա սպառումը տրանսֆերտ կատարելուց:

Գրաֆիկ 3. Միգրանտի տարիքի ազդեցությունը տրանսֆերտների տարբեր խմբերի մեջ ընկնելու հավանականության վրա.



Մեծ տնային տնտեսությունները ստանում են տրանսֆերտների առավել մեծ ծավալներ, ինչը բնութագրում է միգրանտի ալտրուիստական շարժառիթները: Ներկայացնենք նաև տնային տնտեսության անդամների քանակից կախված տրանսֆերտների աճի հավանականությունը.

Գրաֆիկ 4. Տնային տնտեսության անդամների քանակի ազեցությունը տրանսֆերտների տարբեր խմբերի մեջ ընկնելու հավանականության վրա.



Տնային տնտեսության անդամների քանակի ավելացմանը զուգահեռ նվազում է ցածր խմբի մեջ մնալու հավանականությունը, փոխարենը մեծանում է միջին և բարձր խմբի մեջ մնալու հավանականությունը: Ինչ վերաբերում է տնային տնտեսության գործազուրկների քանակին, ապա վերջինս վիճակագրորեն ոչ նշանակալի է:

Հաջորդ հետաքրքրական փաստը վերաբերում է միևնույն տնային տնտեսությանը տրանսֆերտ ուղարկողների քանակի ազդեցությանը: Վերջինս տրանսֆերտների վրա ունի հակադարձ U-աձև ազդեցություն (փոփոխականի քառակուսու գործակիցը բացասական է): Այսինքն՝ տրանսֆերտ ուղարկողների որոշակի քանակի դեպքում արդեն տրանսֆերտների աճի հավանականությունը նվազում է, որի հնարավոր բացատրություններից մեկը կարող է հանդիսանալ այն, որ ժառանգության հետ կապված շարժառիթները աստիճանաբար թուլանում են, երբ տրանսֆերտ ուղարկողը հանդիպում է մրցակցության տրանսֆերտ ուղարկող այլ անձանց կողմից:


Իսկ ինչ վերաբերում է տրանսֆերտ ուղարկելու պարբերականությանը, ապա այն դրականորեն է ազդում տրանսֆերտների աճի վրա: Հիմքում ընկած է այն գաղափարը, որ պարբերաբար ուղարկողներն առավել կապված են իրենց ընտանիքների հետ, այդ իսկ պատճառով ուղարկում են համեմատաբար շատ: Նույն տրամաբանությամբ անմիջական ընտանիքի անդամները ստանում են շատ:

Միգրանտի կրթական մակարդակը, ինչպես ակնկալվում է շատ դեպքերում, դրական է ազդում տրանսֆերտների վրա, քանի որ ենթադրվում է, որ բարձրագույն կրթություն ունեցողների վարձատրությունը բարձր է կրթություն չունեցողների վարձատրությունից: Ինչպես արդեն նշվել է կրթական մակարդակը մեզ մոտ հանդիսանում է որպես եկամտին մոտարկող գործոն:

Սեզոնային աշխատողները հակված են շատ տրանսֆերտ ուղարկելու, քանի որ վերջիններս ըստ էության ունեն վերադառնալու մտադրություն: Այդ իսկ պատճառով խնայողությունների գերակշիռ մասը, եթե ոչ ամբողջ խնայողությունները փոխանցվում են հայրենի երկիր: Եվ կարելի է ենթադրել, որ այս դեպքում միգրացիա կատարելու շարժառիթները և տրանսֆերտների շարժառիթները նույնացվում են:

Տրանսֆերտների վարքագծի առանձնահատկություններից մեկն այն է, որ վերջիններս տրանսֆերտների ստացման տարիներից կախված դրսևորում են հակադարձ U-աձև կախվածություն: Այսինքն՝ միգրանտների փորձառության աճին զուգահեռ ավելանում են եկամուտները, հետևաբար մեծանում է տրանսֆերտների աճի հավանականությունը, այնուհետև որոշակի ժամանակահատվածից հետո տրանսֆերտները դրսևորում են նվազման վարքագիծ: Նման վարքագիծը կարելի է բացատրել նրանով, որ տարիների ընթացքում ընտանեկան կապերը թուլանում են կամ որոշակի տարիներից հետո միգրանտը իր ընտանիքը տեղափոխում է արտերկիր: Ստորև ներկայացնենք նաև տրանսֆերտների հավանականությունների գրաֆիկը ժամանակից կախված.

Գրաֆիկ 5. Տրանսֆերտներ ստանալու տարիների ազդեցությունը տրանսֆերտների տարբեր խմբերի մեջ ընկնելու հավանականության վրա.



5.2. Լրացուցիչ դիտարկումներ

Ինչպես արդեն նշվել է, տնային տնտեսության եկամտի U-աձև ազդեցությունը տրանսֆերտների վրա, ինչպես նաև բարձրագույն կրթության դրական ազդեցությունը թույլ են տալիս ալտրուիստական շարժառիթների կողքին փնտրել նաև այլ եսասիրական շարժառիթներ ևս: Նշված հիպոթեզը ստուգելու համար կատարենք լրացուցիչ դիտարկումներ: Ըստ ենթադրության շարժառիթները կարող են տարբերվել գյուղական և մայրաքաղաքային բնակչության մոտ, սեզոնային և ոչ սեզոնային աշխատողների մոտ: Նշված երկու տարանջատումներից բացի կդիտարկենք նաև ըստ տրանսֆերտների ծախսման ուղղությունների[20], քանի որ նշված ցուցանիշին նայելով պարզապես հնարավոր չէ եզրահանգել, արդյոք միգրանտը և տնային տնտեսությունը գործում են համատեղ օգտակարության բարձրացման պայմանով, թե միգրանտը պարզապես գործում է անհատական շարժառիթներով (փոխանակում ծառայությունների դիմաց, ժառանգություն, ստրատեգիական շարժառիթ):

Առանձին դիտարկենք տրանսֆերտների այն թվային բազան, որի 50%-ը և ավելին ծախսվում է ընթացիկ սպառման վրա, այնուհետև տրանսֆերտների այն թվային բազան, որի 50%-ը և ավելին ուղղվում են այլ ծախսերի: Այլ ծախսերի մեջ ներառված են կրթության ծախսերը, անշարժ գույքի և հողի ձեռքբերման ծախսերը, ձեռնարկչատիրական գործունեությանն ուղղված ծախսերը, խնայողությունները:

Dependent Variable: REMCONS
Method: ML - Ordered Logit (Quadratic hill climbing)
Included observations: 2300
Excluded observations: 324 after adjusting endpoints
Number of ordered indicator values: 3
Convergence achieved after 8 iterations
QML (Huber/White) standard errors & covariance

	Coefficient	Std. Error	z-Statistic	Prob.
M_INCOME	0.171366	0.048034	3.567598	0.0004
HH_SIZE	0.066463	0.023398	2.840568	0.0045
UNEMP/HH_SIZE	0.174956	0.177893	0.983490	0.3254
N_REMITTERS	4.186546	0.817284	5.122513	0.0000
N_REMITTERS^2	-0.900659	0.201018	-4.480491	0.0000
REG	1.700803	0.126363	13.45963	0.0000
WORKER	-0.066478	0.135182	-0.491769	0.6229
IMMEDIATE_MEMBER	1.171145	0.123006	9.521004	0.0000
AGE_MIG	-0.025055	0.023708	-1.056821	0.2906
AGE_MIG^2	0.000364	0.000259	1.404310	0.1602

[20] Այս դեպքում կախյալ փոփոխականը ընդունում է 1 արժեք, եթե տրանսֆերտների 50%-ը և ավելին օգտագործվում է ընթացիկ սպառումից բացի այլ ուղղություններով:

HIGH_EDUC	0.407212	0.217561	1.871715	0.0612
SECONDARY_EDUC	-0.230763	0.198391	-1.163176	0.2448
SEAZONAL_WORKER	1.589238	0.119434	13.30642	0.0000
Y_REM	0.094891	0.022834	4.155601	0.0000
Y_REM^2	-0.002063	0.000901	-2.289433	0.0221
HH_INCOME	-0.119058	0.025926	-4.592259	0.0000
TOWN2	1.017086	0.121804	8.350203	0.0000

Akaike info criterion	1.406499	Schwarz criterion	1.453921
Log likelihood	-1598.473	Hannan-Quinn criter.	1.423788
Restr. log likelihood	-2128.168	Avg. log likelihood	-0.694988
LR statistic	1059.388	Prob(LR statistic)	0.000000

Dependent Variable: REMNONCONS
Method: ML - Ordered Logit (Quadratic hill climbing)
Date: 06/16/08 Time: 12:19
Sample (adjusted): 1 2620
Included observations: 325 after adjustments
Number of ordered indicator values: 3
Convergence achieved after 6 iterations
QML (Huber/White) standard errors & covariance

	Coefficient	Std. Error	z-Statistic	Prob.
M_INCOME12/1000	0.517661	0.149685	3.458337	0.0005
HH_SIZE	0.023851	0.079839	0.298737	0.7651
UNEMP	-0.027808	0.107695	-0.258208	0.7962
N_REMITTERS	1.247717	1.699005	0.734381	0.4627
N_REMITTERS^2	-0.098315	0.376799	-0.260923	0.7942
REG	0.898841	0.293470	3.062800	0.0022
IMMEDIATE_MEMBER	1.076777	0.302359	3.561249	0.0004
AGE_MIG	-0.102169	0.068232	-1.497381	0.1343
AGE_MIG^2	0.001377	0.000767	1.794491	0.0727
HIGH_EDUC	0.439745	0.469541	0.936542	0.3490
SECONDARY_EDUC	-0.352027	0.417555	-0.843066	0.3992
SEAZONAL_WORKER	0.948480	0.317383	2.988442	0.0028
Y_REM	0.039166	0.029249	1.339053	0.1806
HH_INCOME12/1000	0.052641	0.036062	1.459716	0.1444

Pseudo R-squared	0.161675	Akaike info criterion	1.763957
Schwarz criterion	1.950238	Log likelihood	-270.6430
Hannan-Quinn criter.	1.838302	Restr. log likelihood	-322.8378
LR statistic	104.3895	Avg. log likelihood	-0.832748
Prob(LR statistic)	0.000000		

Նշված երկու հավասարումների միջև հիմնական տարբերությունները վերաբերում են տնային տնտեսության եկամուտներին և չափսերին: Սպառողական նպատակով տրանսֆերտ ուղարկողները առավել մեծ ծավալի տրանսֆերտ են ուղարկում համեմատաբար մեծ ընտանիքներին և ցածր եկամուտ ունեցողներին, ինչը մեկ անգամ ևս ապացուցում է ալտրուիստական շարժառիթների առկայությունը:

Հետաքրքրական արդյունքներ են ստացվել այլ շարժառիթներով ուղարկվող տրանսֆերտների հավասարման մեջ, որտեղ տնային տնտեսության եկամուտը, բարձրագույն կրթությունը, միգրանտների քանակը, տրանսֆերտների ստացման տարիները վիճակագրորեն նշանակալի չեն տրանսֆերտների վրա ազդեցության տեսանկյունից: Վերջիններս որոշակի բացառություններով համապատասխանում են ապահովագրության և, որն ավելի հավանական է, ժառանգության շարժառիթներին: Բացառությունները վերաբերում են միգրանտների քանակի հակադարձ U-աձև ազդեցությանը, ինչը փորձնականորեն չի ստացվել, բացի դա տվյալների բազայում բացակայում են տնային տնտեսության կողմից տնօրինվող ակտիվների հարցումները: Այնուամենայնիվ՝ տնային տնտեսության եկամտի (ժառանգության շարժառիթի դեպքում ակնառու եզրահանգում), միգրանտի կրթական մակարդակի և տրանսֆերտների ուղարկման տարիների ազդեցությունները ոչ նշանակալի լինելը փաստում է նաև ժառանգության շարժառիթների առկայությունը: Նշված գործոնների ազդեցության ուղղությունները համապատասխանում են նաև ապահովագրության շարժառիթների նույնպես, բացառություն է կազմում միգրանտի եկամտի ազդեցության ուղղությունը: Ապահովագրության շարժառիթների ներքո միգրանտի եկամտի ազդեցությունը պետք է լինի ոչ նշանակալի, իսկ մեր դեպքում այն դրական է և նշանակալի: Հնարավոր պատճառներից կարող է հանդիսանալ այն, որ միևնույն միգրանտը շարժվում է և ալտրուիստական և ապահովագրության շարժառիթներով միաժամանակ:

Հաջորդ տարանջատումը կատարենք հետևյալ ձևով՝ տրանսֆերտներ ստացողներին դասակարգելով ըստ մայրաքաղաքային և գյուղական տնային տնտեսությունների:

Dependent Variable: REMRURAL
Method: ML - Ordered Logit (Quadratic hill climbing)
Included observations: 1979
Number of ordered indicator values: 3
Convergence achieved after 6 iterations
QML (Huber/White) standard errors & covariance

	Coefficient	Std. Error	z-Statistic	Prob.
M_INCOME	0.233994	0.064450	3.630643	0.0003
HH_SIZE	0.131927	0.026131	5.048652	0.0000
UNEMP/HH_SIZE	0.052813	0.205606	0.256865	0.7973

N_REMITTERS	3.182762	1.056501	3.012551	0.0026
N_REMITTERS^2	-0.630263	0.284271	-2.217121	0.0266
REG	1.440053	0.135971	10.59087	0.0000
WORKER	-0.377388	0.157896	-2.390107	0.0168
IMMEDIATE_MEMBER	1.068459	0.132668	8.053642	0.0000
AGE_MIG	-0.076892	0.029363	-2.618682	0.0088
AGE_MIG^2	0.000957	0.000339	2.826939	0.0047
HIGH_EDUC	0.541841	0.215401	2.515499	0.0119
SECONDARY_EDUC	-0.158020	0.186690	-0.846431	0.3973
SEAZONAL_WORKER	1.416233	0.121104	11.69439	0.0000
Y_REM	0.076726	0.024376	3.147673	0.0016
Y_REM^2	-0.001890	0.000911	-2.074207	0.0381
HH_INCOME	-0.416507	0.050485	-8.250044	0.0000
(HH_INCOME)^2	0.029404	0.004308	6.825395	0.0000

Pseudo R-squared	0.249653	Akaike info criterion	1.423212
Schwarz criterion	1.476884	Log likelihood	-1389.269
Hannan-Quinn criter.	1.442930	Restr. log likelihood	-1851.502
LR statistic	924.4660	Avg. log likelihood	-0.702005
Prob(LR statistic)	0.000000		

Dependent Variable: REMTOWN
Method: ML - Ordered Logit (Quadratic hill climbing)
Included observations: 646 after adjustments
Number of ordered indicator values: 3
Convergence achieved after 6 iterations
QML (Huber/White) standard errors & covariance

	Coefficient	Std. Error	z-Statistic	Prob.
M_INCOME	0.157998	0.067765	2.331547	0.0197
HH_SIZE	-0.074871	0.053525	-1.398812	0.1619
UNEMP/HH_SIZE	-0.137764	0.309499	-0.445120	0.6562
N_REMITTERS	2.942336	1.553447	1.894069	0.0582
N_REMITTERS^2	-0.628124	0.344205	-1.824854	0.0680
REG	1.769930	0.216888	8.160579	0.0000
WORKER	0.085442	0.205403	0.415974	0.6774
IMMEDIATE_MEMBER	0.903866	0.223221	4.049203	0.0001
AGE_MIG	0.083690	0.042754	1.957487	0.0503
AGE_MIG^2	-0.000721	0.000433	-1.662873	0.0963
HIGH_EDUC	-0.068073	0.581804	-0.117003	0.9069
SECONDARY_EDUC	-0.613652	0.572962	-1.071016	0.2842
SEAZONAL_WORKER	1.317985	0.292958	4.498883	0.0000
Y_REM	0.141647	0.048001	2.950925	0.0032
Y_REM^2	-0.001411	0.002174	-0.648733	0.5165
HH_INCOME	-0.361784	0.077251	-4.683238	0.0000
(HH_INCOME)^2	0.028001	0.005045	5.549727	0.0000

Pseudo R-squared	0.274113	Akaike info criterion	1.427321
Schwarz criterion	1.558815	Log likelihood	-442.0247

Hannan-Quinn criter.	1.478339	Restr. log likelihood	-608.9443
LR statistic	333.8392	Avg. log likelihood	-0.684249
Prob(LR statistic)	0.000000		

Փաստորեն գնահատված հավասարումներից տեսնում ենք, որ տնային տնտեսության անդամների քանակը նշանակալի է գյուղական տնային տնտեսությունների համար, իսկ քաղաքային տնային տնտեսության անդամների քանակը տրանսֆերտների ծավալների հավանականության վրա չունի ուղղակի ազդեցություն. այն վիճակագրորեն նշանակալի չէ: Սա, մեր կարծիքով, պայմանավորված է նրանով, որ քաղաքային ընտանիքները անդամների քանակով համեմատաբար համասեռ են, ի տարբերություն գյուղական տնային տնտեսությունների: Հաջորդ տարբերությունը վերաբերում է տրանսֆերտ ուղարկողների քանակին՝ գյուղական տնային տնտեսությունների համար այն նշանակալի է, մինչդեռ հակառակ պատկերն է քաղաքի տնային տնտեսությունների համար: Հետաքրքրական է նաև այն, որ գյուղացի միգրանտի կրթական մակարդակը դրականորեն է ազդում տրանսֆերտների վրա, իսկ քաղաքի միգրանտի համար այն նշանակալի չէ: Վերջինս կարող է պայմանավորված լինել այն հանգամանքով, որ բարձրագույն կրթություն ստանալու հակվածությունը, ինչպես նաև հնարավորությունները գյուղական միջավայրերում ցածր է: Այդ իսկ պատճառով բարձրագույն կրթություն ունեցող և կրթություն չունեցող գյուղացիների միջև տարբերությունները զգալի են (արտերկրում եկամուտ ստանալու հավանականության առումով): Մինչդեռ քաղաքային բնակչության համար այն էական չէ, քանի որ ըստ էության վերջիններիս համար բարձրագույն կրթություն ստանալու հնարավորությունները մեծ են և ծախսերը համեմատաբար ցածր:

Եվ վերջին բաժանումը կատարենք ըստ միգրանտների՝ դասակարգելով վերջիններիս ըստ սեզոնային և ոչ սեզոնային աշխատողների:

Dependent Variable: REMSEAZ
Method: ML - Ordered Logit (Quadratic hill climbing)
Included observations: 869
Number of ordered indicator values: 3
Convergence achieved after 6 iterations
QML (Huber/White) standard errors & covariance

	Coefficient	Std. Error	z-Statistic	Prob.
M_INCOME12/1000	0.467672	0.111113	4.208977	0.0000
HH_SIZE	0.055435	0.042645	1.299930	0.1936
UNEMP/HH_SIZE	-0.259017	0.353998	-0.731689	0.4644
N_REMITTERS	3.036707	0.923742	3.287397	0.0010
N_REMITTERS^2	-0.644036	0.217108	-2.966427	0.0030
REG	1.120674	0.195638	5.728312	0.0000

WORKER	-1.084377	0.327857	-3.307467	0.0009
IMMEDIATE_MEMBER	1.033652	0.231822	4.458811	0.0000
AGE_MIG	-0.016790	0.059926	-0.280174	0.7793
AGE_MIG^2	0.000339	0.000738	0.459444	0.6459
HIGH_EDUC	0.394739	0.306270	1.288856	0.1974
SECONDARY_EDUC	-0.278159	0.229689	-1.211021	0.2259
Y_REM	0.089966	0.036888	2.438868	0.0147
Y_REM^2	-0.001987	0.001261	-1.575333	0.1152
HH_INCOME	-0.220921	0.085280	-2.590533	0.0096
(HH_INCOME)^2	0.015183	0.005958	2.548399	0.0108

Pseudo R-squared	0.121690	Akaike info criterion	1.628978
Schwarz criterion	1.727726	Log likelihood	-689.7908
Hannan-Quinn criter.	1.666763	Restr. log likelihood	-785.3614
LR statistic	191.1412	Avg. log likelihood	-0.793775
Prob(LR statistic)	0.000000		

Dependent Variable: REMNONSEAZ
Method: ML - Ordered Logit (Quadratic hill climbing)
Included observations: 1757 after adjustments
Number of ordered indicator values: 3
Convergence achieved after 6 iterations
QML (Huber/White) standard errors & covariance

	Coefficient	Std. Error	z-Statistic	Prob.
M_INCOME	0.140490	0.050779	2.766720	0.0057
HH_SIZE	0.111244	0.026085	4.264618	0.0000
UNEMP/HH_SIZE	0.371732	0.191737	1.938755	0.0525
N_REMITTERS	3.671519	1.047759	3.504163	0.0005
N_REMITTERS^2	-0.714710	0.261268	-2.735541	0.0062
REG	1.643567	0.151605	10.84111	0.0000
WORKER	-0.080719	0.132974	-0.607029	0.5438
IMMEDIATE_MEMBER	0.830451	0.127772	6.499490	0.0000
AGE_MIG	-0.060138	0.025689	-2.341048	0.0192
AGE_MIG^2	0.000752	0.000272	2.770008	0.0056
HIGH_EDUC	0.793698	0.304381	2.607578	0.0091
SECONDARY_EDUC	-0.060895	0.296355	-0.205480	0.8372
Y_REM	0.133713	0.034606	3.863897	0.0001
Y_REM^2	-0.004535	0.001759	-2.577968	0.0099
HH_INCOME	-0.468603	0.046522	-10.07264	0.0000
(HH_INCOME)^2	0.036341	0.003338	10.88709	0.0000

Pseudo R-squared	0.211160	Akaike info criterion	1.352472
Schwarz criterion	1.408525	Log likelihood	-1170.147
Hannan-Quinn criter.	1.373189	Restr. log likelihood	-1483.376
LR statistic	626.4588	Avg. log likelihood	-0.665991
Prob(LR statistic)	0.000000		

Այն միկրոորոշիչները, որոնք նշանակալի չեն սեզոնային աշխատողների փոխանցումների ծավալների որոշման համար դրանք տնային տնտեսության չափսերն են, կրթական մակարդակը և տարիքը: Այսինքն՝ սեզոնային աշխատողները հիմնականում զբաղված են շինարարության ճյուղում, որտեղ ըստ էության բարձրագույն կրթություն ունեցողները և կրթություն չունեցողները վարձատրվում են միևնույն չափով: Բացի դա կարճ ժամանակահատվածում բավականին դժվար է գտնել մասնագիտական որակավորում ունեցող աշխատանք, ի տարբերություն այն միգրանտների, որոնք ունեն մշտական բնակչություն արտերկրում: Ինչ վերաբերում տարիքին, ապա ենթադրվում է, որ սեզոնային աշխատողների միջև արտադրողականությունների տարբերությունները զգալի չեն, քանի որ ըստ էության ընտանիքից ընտրվում է համեմատաբար բարձր արտադրողականություն ունեցողը: Բացի դա սեզոնային աշխատողների փոխանցումները սպառման հարթեցման խնդիրներից բացի այլ նպատակներով են կատարվում նաև, որի դեպքում ընտանիքի անդամների քանակը դեր չի խաղում փոխանցումների ծավալների համար:

5.3. Եզրակացություն

Նշված վերլուծությունը փորձնականորեն ապացուցում է ՀՀ տրանսֆերտների ալտրուիստական շարժառիթների գերակայությունը, ինչը նախկինում պարզապես ենթադրվում էր: Տրանսֆերտների շարժառիթների համար եզրահանգումներ կատարելու հիմնական գործոնը փոխկախվածությունն է տրանսֆերտների և տնային տնտեսությունների եկամուտների միջև: *Մեր դեպքում հակադարձ կախվածությունը պնդում է ալտրուիստական շարժառիթների գերակայությունը:* Համադրելով աղյուսակ1-ում արտացոլված տարբեր մոդելների հետ՝ տեսնում ենք, որ համընդհանուր թվային բազայի կիրառման արդյունքում գրեթե բոլոր գործոնների ազդեցության ուղղությունները համապատասխանում են ալտրուիստական շարժառիթներին: Այլ դեմոգրաֆիական բնութագրիչները հիմնականում համապատասխանում են ալտրուիզմին: Հարկ է նշել նաև, որ միգրանտի բարձրագույն կրթության ազդեցությունը դրական է, ինչը կարող է խոսել ստրատեգիական շարժառիթների մասին (մնացած հիմնական գործոնների ազդեցության ուղղությունները նույնպես համապատասխանում են): Սակայն միգրանտի եկամուտները հարցումների բազայում բացակայում են, այդ իսկ պատճառով դրանք ստացվել են մոտարկման եղանակով, որտեղ օրինակ՝ բոլոր շինարարների եկամուտները մոտարկվել են միևնույն թվով (անկախ կրթության մակարդակից և արտերկրում գտնվելու տարիներից): Այս դեպքում բարձրագույն կրթության նշանը դրական է դարձել, ինչը ըստ էության եկամուտների տարբերությունների հիմնական պատճառ կարող է հանդիսանալ, և չի հակասում ալտրուիստական շարժառիթներին:

Ավելացնենք նաև, որ հնարավոր է գերագնահատվի ալտրուիզմը, քանի որ իրականում միևնույն միգրանտը կարող է գործել ստրատեգիական և ալտրուիստական շարժառիթներով միաժամանակ: Սակայն գործնականում բավականին դժվար է բացահայտել ստրատեգիական շարժառիթները:

Հետաքրքրական արդյունքներ են ստացվել տնային տնտեսության եկամուտների U-աձև ազդեցության առումով (եկամուտների քառակուսու գործակիցը դրական է), ինչը թույլ է տվել կատարել լրացուցիչ դիտարկումներ՝ պարզելու եսասիրական այլ շարժառիթների հաստատումը: Լրացուցիչ դիտարկումները, որոնք վերաբերում են գյուղական և մայրաքաղաքային, սեզոնային և ոչ սեզոնային միգրանտների տարանջատումներին, շարժառիթների մասով ցույց են տվել ալտրուիզմի գերակայությունը բոլոր դեպքերում (տնային տնտեսության եկամտի ազդեցությունը բացասական է բոլոր դեպքերում): Այսինքն՝ այն հիպոթեզները, որ շարժառիթների մասով հիմնական տարբերությունները կարող են երևալ գյուղական և քաղաքային, ինչպես նաև սեզոնային և ոչ սեզոնային միգրանտների տարանջատումների ներքո, փորձնականորեն չի ապացուցվել:

Ըստ նպատակի տրանսֆերտների տարանջատման ժամանակ, եսասիրական շարժառիթներից առկա են ինչպես անհատական՝ ժառանգության, այնպես էլ որոշակի բացառություններով ընտանեկան փոխադարձ համաձայնությունների ներքո՝ ապահովագրության շարժառիթներ:

Այնուամենայնիվ, ալտրուիզմից բացի այլ շարժառիթների բացահայտման համար առկա են որոշակի խնդիրներ, որոնք վերաբերում են հարցումների բազայի հետագա զարգացմանն ու որակական բարելավմանը (փորձնական կիրառության տեսանկյունից), ինչպես նաև անհրաժեշտ է ներառել նաև այլ բնութագրիչներ ու փոփոխականներ: Դրա հետևանքով հնարավոր կլինի լուծել վերլուծության մեջ առաջ քաշվող հիմնախնդիրները, ինչի արդյունքում կտրվեն ամբողջական եզրահանգումներ: Հետագա հարցումների ժամանակ խիստ անհրաժեշտություն կա բարելավել տնային տնտեսության եկամուտների հարցման որակը, ներառել միգրանտների եկամուտների և տնային տնտեսության ակտիվների վերաբերյալ տեղեկատվությունը: Կան նաև տեխնիկական խնդիրներ, ինչպես օրինակ՝ տրանսֆերտների ծավալների միջակայքերի քանակի ավելացումը, միջակայքերի միջև տրանսֆերտների տարբերությունների հավասարաչափ բաշխումը և այլն:


6. Ինչպես են արձագանքում տրանսֆերտները ներքին տնտեսության ՀՆԱ ցիկլային տատանումներին

Նախորդ գլխում տեսանք, որ միկրոմակարդակում իսկապես տրամաբանական է, որ միգրանտները կավելացնեն իրենց օգնությունը տնային տնտեսությանը տնտեսական վատ ժամանակաշրջանում՝ փոխհատուցելու գործազրկությամբ կամ այլ ճգնաժամային պատճառներով պայմանավորված եկամուտների կորուստը: Տրանսֆերտների այսպիսի վարքագիծը հանդիսանում է որպես կայունացնող գործոն ազգային եկամտի մեծ տատանումների դեպքում բիզնես ցիկլի տարբեր փուլերի ընթացքում: Այնուամենայնիվ, *տրանսֆերտներ կատարելու որոշումներն* իրականում բազմակողմանի են, որոնք կարող են պայմանավորված լինել այլ գործոններով, քան օգնել հարթելու տնային տնտեսության ընթացիկ սպառման ծախսերը: Տարբեր փոփոխականներ (օրինակ՝ տոկոսադրույքների կամ փոխարժեքների տարբերությունները երկրների միջև), որոնք ազդում են տրանսֆերտների վարքագծի վրա, պատասխանում են տնտեսական ակտիվությանը տարբեր կերպ: Այդ իսկ պատճառով համացիկլիկայնության (procyclical) կամ ացիկլիկայնության (acyclical) հնարավորությունները դժվար է բացառել հենվելով միայն միկրոտնտեսական շարժառիթների վրա: Համացիկլիկայնության դեպքում տրանսֆերտները կարող են հանդիսանալ որպես ապակայունացնող գործոն՝ էլ ավելի խորացնելով կամ արագացնելով բիզնես ցիկլերը, հետևաբար բերելով թողարկման կամ ընթացիկ հաշվի հաշվեկշռի լրացուցիչ տատանումների: Այդ իսկ պատճառով շատ կարևոր է գնահատել տրանսֆերտների վարքագիծը ՀՆԱ վարքագծի նկատմամբ բիզնես ցիկլերի ընթացքում: Տրանսֆերտները կարող են արձագանքել նաև արտերկրի տնտեսական ակտիվության փոփոխություններին նույնպես: Նշենք, որ եթե միկրոմակարդակում միգրանտները ալտրուիստական շարժառիթներով են գործում, ապա մակրոմակարդակում տրանսֆերտները պետք է շարժվեն ՀՆԱ տատանումներին հակառակ (հակացիկլայնություն):

Այս ենթատեքստում բիզնես ցիկլերը սահմանվում են որպես իրական փոփոխականների շեղումներ իրենց երկարաժամկետ միտումներից: Այսպիսով տրանսֆերտների ցիկլային բնութագրերը այստեղ դիտարկվում են որպես տրանսֆերտների և իրական ՀՆԱ-ի իրենց միտումներից շեղումներ: Այս մոտեցումը տարբեր է ՀՆԱ-ի և տրանսֆերտների միջև ժամանակային շարքերով սովորական ռեգրեսիոն վերլուծությունից: Ցանկացած բացասական (դրական) փոխկախվածություն անպայմանորեն չի ենթադրում, որ տրանսֆերտները բիզնես ցիկլերին հակառակ (համընթաց) ուղղությամբ են շարժվում: *Համացիկլիկայնությունը կամ հակացիկլիկայնությունը այս ենթատեքստում վերաբերում է տրանսֆերտների իրենց միտումներից շեղմանը՝ ունենալով իրական ՀՆԱ դրական կամ բացասական շեղում երկարաժամկետ միտումից:*


Նշված տրամաբանությամբ փորձենք պատասխանել այն հարցին, թե ինչպիսի վարքագիծ են ցուցաբերում ՀՀ-ում տրանսֆերտները ՀՆԱ-ի ցիկլային տատանումների նկատմամբ: Վերլուծությունում ընդգրկված են 1998-2007թթ. մշտական բնակություն ունեցող միգրանտների և սեզոնային աշխատողների ընդհանուր դրամական փոխանցումները եռամսյակային կտրվածքով: Ինչպես երևում է գրաֆիկ 1-ից արտերկրներից դրամական փոխանցումները դրսևորել են աճման միտում, իսկ արդեն 2004թ.-ից սկսած աճի տեմպերի նշանակալի արագացում է արձանագրվել, ինչը դրսևորվել է նաև այլ զարգացող և անցումային այլ տնտեսություններում:

Գրաֆիկ 1. Դրամական փոխանցումների վարքագիծը 1998-2007թթ. ընթացքում




Ցիկլային բաղադրիչների գնահատման համար կօգտագործենք իրական ՀՆԱ և իրական դրամական փոխանցումների շարքերը: Իրական դրամական փոխանցումները հաշվարկվել են հետևյալ կերպ՝ նախ դոլարային արտահայտությամբ փոխանցումները ճշգրտվել են ՀՀ դրամի անվանական փոխարժեքով, այնուհետև ստացված ցուցանիշը ճշգրտվել է գնաճով: Ստորև ներկայացնենք նշված ցուցանիշների հարթեցված շարքերի գրաֆիկական տեսքը:

Գրաֆիկ 2. Իրական ՀՆԱ և իրական դրամական փոխանցումների վարքագիծը, (հարթեցված շարքեր, լոգարիթմական արտահայտությամբ)



Ժամանակային շարքերը սեզոնայնությունից մաքրելուց հետո, անհրաժեշտ է նաև մաքրել տրենդից, որի արդյունքում կստացվի ցիկլային բաղադրատարրը: Ցիկլային բաղադրատարրն առանձնացվել է օգտագործելով Հոդրիկ Փրեսկոթ ֆիլտրը:

Գրաֆիկ 3. Տրանսֆերտների և ՀՆԱ ցիկլային բաղադրիչները, որոնք ստացվել են Հոդրիկ-Փրեսկոթ ֆիլտրի արդյունքում.



ՀՆԱ և տրանսֆերտների ցիկլային բաղադրիչների գնահատումից հետո երկու տիպի կորելյացիայի գործակիցներ կարելի է ստանալ ցիկլային բաղադրիչների միջև՝ միաժամանակյա և լագային կորելյացիայի գործակիցներ: Լագային գործակիցները հնարավորություն են տալիս բացահայտել, թե որքան ժամանակահատված առաջ և որքան ժամանակահատված հետո է ձեռք բերվում ամենաբարձր կորելյացիայի գործակիցը միաժամանակյա գործակցի հետ համեմատած:

Ստորև ներկայացված աղյուսակը ցույց է տալիս միաժամանակյա և լագային կորելյացիայի գործակիցները:

Աղյուսակ 7. Կորելիացիայի գործակիցները իրական ՀՆԱ-ի և իրական տրանսֆերտների միջև

	ՀՆԱ արձագանքը տրանսֆերտների տատանումներին							Տրանսֆերտների արձագանքը ՀՆԱ տատանումներին					
t	-6	-5	-4	-3	-2	-1	0	1	2	3	4	5	6
1998/1-2007/1	-0.03	0.258	-0.04	-0.29	-0.07	0.05	0.05	0.12	0.026	0.196	0.216	**0.285***	0.169

* t վիճակագիրը նշանակալի է

Աղյուսակ 8. ՀՆԱ և տրանսֆերտների տատանումների միջև ռեգրեսիոն վերլուծության արդյունքները

Dependent Variable: CYCLETRANS
Method: Least Squares
Sample (adjusted): 1999Q2 2007Q4
Included observations: 35 after adjustments

	Coefficient	Std. Error	t-Statistic	Prob.
CYCLEGDP(-5)	2.278629	0.733871	3.104944	0.0040
D041	0.281973	0.078642	3.585508	0.0011
C	-0.021322	0.018731	-1.138314	0.2634

R-squared	0.392273	Mean dependent var	-0.004656
Adjusted R-squared	0.354290	S.D. dependent var	0.133844
S.E. of regression	0.107552	Akaike info criterion	-1.539870
Sum squared resid	0.370157	Schwarz criterion	-1.406554
Log likelihood	29.94772	Hannan-Quinn criter.	-1.493849
F-statistic	10.32763	Durbin-Watson stat	1.686897
Prob(F-statistic)	0.000346		

Աղյուսակ 7-ում նշված կորելյացիայի գործակիցները ցույց են տալիս, որ տրանսֆերտները դրսևորում են համացիկլիկայնություն և ՀՆԱ ցիկլերից հինգ եռամսյակ հետ են մնում: Այսինքն, եթե հակացիկլիկայնությունը ենթադրում է, որ միգրանտները ավելացնում են տրանսֆերտների ծավալները տնտեսական վատ ժամանակահատվածում, ինչը ենթադրում է սպառման հարթեցման շարժառիթ, ապա համացիկլիկայնությունը ենթադրում է, որ միգրանտները ավելացնում են տրանսֆերտների ծավալները տնտեսական բարենպաստ ժամանակահատվածներում: Վերջինս արդեն ենթադրում է *ներդրումային որոշումների առկայություն*: Իսկ ինչ վերաբերում է ժամանակի

նկատմամբ միգրանտների արձագանքին, ապա ՀՀ միգրանտները արձագանքում են հինգ եռամսյակ հետո:

Համեմատության կարգով նշենք որոշ երկրներում տրանսֆերտների ցիկլային բնութագրերը[21].

Աղյուսակ 9. ՀՆԱ և տրանսֆերտների միջև կորելյացիայի գործակիցներ

	Տրանսֆերտ (t-1)	Տրանսֆերտ (t)	Տրանսֆերտ (t+1)	Ցիկլային բնույթ
Երկիր				
Բանգլադեշ	0.0536	**-0.4145***	-0.1329	հակացիկլիկ և սինխրոն
Դոմինիկյան Հանր.	**0.2497**	0.2289	0.1109	ացիկլիկ
Հնդկաստան	0.3747	-0.0143	**-0.3798***	հակացիկլիկ, տրանսֆերտները արձագանքում են ՀՆԱ-ին մեկ տարի հետո
Յամայկա	-0.0630	**-0.1812**	-0.0846	ացիկլիկ
Հորդանան	0.3689	**0.8704***	0.6472	համացիկլիկ և սինխրոն
Լեսոտո	0.2193	-0.0105	**-0.0434**	ացիկլիկ
Մարոկո	-0.1217	0.2167	**0.3832 ***	համացիկլիկ, տրանսֆերտները արձագանքում են ՀՆԱ-ին մեկ տարի հետո
Պակիստան	-0.0574	**-0.1539**	0.1499	ացիկլիկ
Սենեգալ	0.0881	0.0718	**0.1076**	ացիկլիկ
Թուրքիա	**-0.0953**	-0.0450	-0.0513	ացիկլիկ

[21] Serdar Sayan,"Business Cycles and Workers' Remittances: How Do Migrant Workers Respond to Cyclical Movements of GDP at Home?", IMF Working Paper, February 2006

Եզրակացություն. Ի տարբերություն միկրոմակարդակում արված վերլուծության արդյունքների, որոնք փաստում են ալտրուիստական շարժառիթների գերակայությունը կամ առավելապես սպառման հարթեցման շարժառիթները, մակրոմակարդակում տրանսֆերտները դրականորեն (համացիկլիկայնություն) են արձագանքում ՀՆԱ տատանումներին՝ ենթադրելով ճիշտ հակառակ՝ ներդրումային, վարքագիծ: Այսինքն՝ տրանսֆերտներն ավելանում են տնտեսական լավ ժամանակաշրջանում և նվազում՝ վատ ժամանակաշրջանում: Փաստորեն համացիկլիկայնության այսպիսի վարքագիծը տնտեսական վատ ժամանակաշրջաններում էլ ավելի է խորացնում ՀՆԱ ցիկլերը: Նշված հակադիր արդյունքները կարող են պայմանավորված լինել այն հանգամանքով, որ խնդիր կա ընթացիկ տրանսֆերտների և այն գումարների գնահատման մեջ, որոնք պարզապես համարվում են միգրանտների կողմից ուղղակի ներդրումներ: Կամ եթե վերադառնանք միկրոմակարդակում արվող հարցումներին, ապա ներդրումային որոշումներով տրանսֆերտներ իրականացնողների բավականին փոքր մասն է ներգրավված հարցումների մեջ:

Այստեղ ավելացնենք նաև, որ հնարավոր է որոշակի ընդհանուր շոկի առկայություն ՀՆԱ և տրանսֆերտների հետ, օրինակ՝ ուղարկող և ստացող երկրների մոտ համանման գլոբալ շոկի առկայություն:

7. Տրանսֆերտների տնտեսական ազդեցությունները ՀՀ-ում

Նախքան ՀՀ տնտեսության վրա տրանսֆերտների ազդեցության քննարկմանը ներկայացնենք գրականության մեջ նշվող հիմնական բանավեճերը այս բնագավառում, որոնք հանգել են տրանսֆերտների տնտեսական ազդեցության տարբեր տեսանկյուններից եզրահանգումների.

1. տրանսֆերտները կարելի է դիտարկել որպես միգրացիայի ֆինանսական կողմ, ինչը կարող է փոխհատուցել թողարկման և այլ ծախսերը՝ պայմանավորված որակյալ աշխատուժի արտահոսքով:

2. տրանսֆերտների՝ տնտեսական աճի վրա ազդեցությունը կախված է վերջիններիս ծախսման հակվածություններից. սպառելու, թե ներդրում կատարելու: Տրանսֆերտները, որոնք ուղղվում են արտադրական գործունեությանը ուղղակիորեն հանգեցնում են տնտեսական աճի: Սակայն, անգամ եթե դրանք ուղղվում են սպառմանը, այն կարող է առաջացնել դրական մուլտիպլիկատիվ ազդեցություններ: Քանի որ տրանսֆերտների մի մասն ուղղվում է ոչ արտահանելի ապրանքների սպառմանը այն պահանջարկի միջոցով խթանում է տնտեսական աճը: Միևնույն ժամանակ ոչ արտահանելի ապրանքների սպառման հարաբերական աճը հանգեցնում է ոչ արտահանելի ապրանքների գների աճի, իրական փոխարժեքի արժևորման (հոլանդական հիվանդություն), հետևաբար նաև մրցունակության կորստի:

3. տարբեր շարժառիթներով ուղարկվող տրանսֆերտները ինքնին կարող են ունենալ տնտեսության վրա տարբեր ազդեցություններ: Ալտրուիստական շարժառիթներով փոխանցվող տրանսֆերտները կարող են ունենալ հակացիկլիկ ազդեցություն, քանի որ տրանսֆերտների ծավալներն ավելանում են տնտեսական անկումների ժամանակ: Միևնույն ժամանակ տրանսֆերտները կարող են հանգեցնել տնային տնտեսությունների աշխատելու ցանկությունների նվազմանը՝ այդպիսով զսպելով տնտեսական աճը (moral hazard): Միևնույն ժամանակ տրանսֆերտների մեծ ծավալներով հոսքերը կարող են ստեղծել նման խնդիրներ մակրոմակարդակում. նպաստելով վճարային հաշվեկշռի դիրքի լավացմանը՝ այդպիսով թուլացնելով ռեֆորմներ իրականացնելու խթանները:

Այսպիսով հանգում ենք նրան, որ տրանսֆերտներն ունեն նշանակալի ազդեցություն ինչպես մակրոմակարդակում, այնպես էլ միկրոմակարդակում:

Մակրոազդեցություններ. տրանսֆերտները մի կողմից կրճատում են աղքատությունը և ավելացնում միջազգային պահուստները, մյուս կողմից նպաստում են տնտեսական միջավայրի բարելավմանը: Միգրանտները ստեղծում են միություններ (ցանցեր), որոնք ակտիվորեն գործում են իրենց հայրենի երկրում: Միևնույն ժամանակ տրանսֆերտները նպաստում են միջազգային առևտրի կապերի հաստատմանը և խորացմանը:

Միկրոազդեցություններ. նպաստում են տնային տնտեսությունների բարեկեցության բարձրացմանը: Վերջիններս ուղղվում են կրթական, առողջության ծախսերի՝ հետևաբար մարդկային կապիտալում ներդրումների: Միևնույն ժամանակ տրանսֆերտներն ուղղվում են նաև այլ մասնավոր ներդրումների նույնպես:

Անդրադառնալով ՀՀ տնտեսությանը՝ փորձենք վերոնշյալ կետերի մասով բերել ՀՀ ԿԲ վերլուծությունների ու հարցումների, ինչպես նաև այլ միջազգային կազմակերպությունների վերլուծությունների եզրահանգումները:

ՀՀ-ում վերջին տարիների ընթացքում նկատվել է մասնավոր փոխանցումների զգալի աճ: Ըստ պաշտոնական վիճակագրության տրանսֆերտների զուտ ներհոսքը 2007թ. կազմել է 1418.6 մլն ԱՄՆ դոլար (մասնավոր տրանսֆերտները և սեզոնային աշխատողների եկամուտները) 2000թ. 162.5 մլն ԱՄՆ դոլարի համեմատ: Այսինքն՝ տրանսֆերտների ներհոսքի աճն անհամեմատ բարձր է, որը շարունակվում է պահպանվել նաև 2008թ. ընթացքում: Իսկ ՀՆԱ-ում վերջիններիս կշիռը 2000թ. 8.5%-ից հասել է 2007թ. մինչև 15.4%: Նշենք նաև, որ ըստ ՀՀ ԿԲ տեղեկատվության ֆիզիկական անձանց ոչ առևտրային բնույթի փոխանցումների զուտ ներհոսքը 2007թ. կազմել է 1058 մլն ԱՄՆ դոլար 2004թ. 472.7 մլն ԱՄՆ դոլարի համեմատ:

Հաշվի առնելով, որ տրանսֆերտները զարգացող երկրների համար հանդիսանում են վճարային հաշվեկշռի կայուն հոսքերից մեկը (այն չի պայմանավորվում քաղաքական գործոններով ի տարբերություն այլ հոսքերի), ապա Հայաստանի դեպքում այն ևս ճիշտ է: Ըստ 2007թ. ՀՀ տնային տնտեսությունների կողմից արտերկրներից ստացված դրամական փոխանցումների հարցման[22] արդյունքների 2006թ. դրամական փոխանցում ուղարկողների մոտ 77.0%-ը շարունակելու է դրամական փոխանցումներ ուղարկել՝ գոնե մոտակա 5 տարիների ընթացքում:

Տնտեսական աճի վրա ազդեցության տեսանկյունից եզրահանգումները կախված են վերջիններիս ծախսման ուղղություններից (սպառում, թե ներդրում): Հարցման ընթացքում փորձ է արվել բացահայտել նաև տնային տնտեսությունների կողմից արտերկրներից ստացված դրամական միջոցների ծախսման ուղղությունները: Ինչպես 2005թ., 2006թ. նս ստացված միջոցների հիմնական մասն ուղղվել է ընթացիկ սպառմանը՝ 73%-ը, թեև այս ցուցանիշը մի փոքր նվազել է նախորդ հարցման համեմատ: Թե՛ քաղաքային, թե՛ գյուղական բնակավայրերում աճել են կրթության վրա ծախսերը՝ 6%-ից հասնելով 9%-ի: Ծախսման ուղղությունների մեջ առկա են նաև անշարժ գույքի և հողի ձեռք բերման, ձեռնարկատիրական գործունեության և խնայողությունների համար կատարվող ծախսերը: Այնուամենայնիվ՝ նշենք, որ տնտեսագետների

[22] Նշված հարցումներն իրականացվել են 2007թ. ՀՀ ԿԲ կողմից Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ:

ճնշող մեծամասնությունը պնդում է, որ սպառմանն ուղղվող ծախսերը հանգեցնում են դրական մուլտիպլիկատիվ ազդեցությունների նույնպես՝ ոչ արտահանելի ապրանքների սպառման միջոցով: ՀՀ դեպքում ոչ արտահանելի հատվածի՝ հատկապես շինարարության և ծառայությունների կշռի նշանակալի աճը վերջին տարիներին փաստում է նշված երևույթը:

Նշենք, որ ըստ ԱՄՀ և USAID-ի կողմից կատարված վերլուծության[23], երկարաժամկետ հատվածում տրանսֆերտների 1 ԱՄՆ դոլար աճը հանգեցնում է ՀՆԱ 0.2 ԱՄՆ դոլար աճի:

Ըստ ԱՄՀ մեկ այլ վերլուծության[24] արդյունքների, «ավանդական տրանսֆերտները», որոնք ուղարկվում են սեզոնային կամ մշտական բնակություն ունեցող միգրանտների կողմից հիմնականում ազդում են սպառման վրա՝ թույլ ազդեցություն ունենալով ՀՆԱ աճի վրա: Մինչդեռ «այլ տրանսֆերտները», որոնք մեծապես կախված են անշարժ գույքի գնումների հետ, դրական են ազդում ներդրումների և տնտեսական աճի վրա: Միևնույն ժամանակ ամենանշանակալի արդյունքները վերաբերում են անվանական փոխարժեքի արժևորման վրա նշված երկու տիպի փոխանցումների ազդեցությանը: Անկախ այն հանգամանքից, թե նշված հոսքերը կհամարենք տրանսֆերտներ, թե ուղղակի ներդրումներ, վերջիններս համարվում են արտարժույթի լրացուցիչ հոսքեր, և այն մասով, որքանով այդ գումարները փոխարինվում են ՀՀ դրամի, ստեղծում են արժևորման ճնշումներ:

Տրանսֆերտների մասով հաջորդ վերլուծությունը կատարվել է վերջերս ԱՄՀ կողմից[25], որտեղ եզրահանգվում է, որ տրանսֆերտներից օգուտները կարող են գերագնահատվել: Եվ միկրոմակարդակում կատարված վերլուծության արդյունքները ցույց են տվել, որ չնայած արտադրողականության կորուստների գնահատման անհնարինությանը, տրանսֆերտ ստացող տնային տնտեսությունները աշխատում են համեմատաբար քիչ (moral hazard): Միևնույն ժամանակ նրանց ծախսերը երեխաների կրթության վրա համեմատաբար ցածր են:

Եթե դիտարկելու լինենք եկամուտների բաշխվածության և աղքատության վրա ազդեցության տեսանկյունից, ապա ըստ եկամուտների խմբերի տնային տնտեսությունների տարանջատումը ցույց է տալիս, որ արտերկրներից դրամական փոխանցումներ ստացող տնային տնտեսությունների 60%-ը աղքատության գծից բարձր եկամուտ ունեցող տնային տնտեսություններն են (միջին և ապահով խավ), իսկ 40%-ը՝ աղքատներն ու ծայրահեղ աղքատները: Չնայած, որ փոխանցումների հիմնական ստացողները աղքատության գծից բարձր եկամուտ ունեցողներն են, այնուամենայնիվ՝ միանշանակորեն չի կարելի հերքել այն փաստը, որ տրանսֆերտները կարևոր դեր չեն խաղում եկամուտների բաշխվածության առումով:

[23] King Banaian, Bryan W. Roberts,"Remittances in Armenia:Size, impacts and measures to enhance their contribution to development", USAID/Armenia, October 2004.
[24] Ruben Atoyan and Nienke Oomes, "Remittances to Armenia: Size, sources and macroeconomic implications, Republic of Armenia: Selected Issues, IMF 2006.
[25] David A. Grigorian and Tigran A. Melkonyan, "Microeconomic implication of remittances in an overlapping generations model with altruism and self-interest, IMF 2008.

7.1. Տրանսֆերտ-իրական փոխարժեք

Այժմ անդրադառնանք տրանսֆերտների և իրական փոխարժեքի միջև փոխկախվածության տեսական մոտեցմանը, ինչպես նաև ներկայացնենք ՀՀ ԿԲ կողմից իրականացված իրական հավասարակշիռ փոխարժեքի գնահատման վերլուծության արդյունքները, որտեղ տրվել է տրանսֆերտների ազդեցության չափի գնահատականը իրական հավասարակշիռ փոխարժեքի վրա:

Տրանսֆերտները կարող են ազդել իրական փոխարժեքի վրա հետևյալ երեք ուղիներով.

1. տրանսֆերտները կարող են ազդել տնտեսության արտաքին հաշվեկշռվածության վրա զուտ արտաքին ակտիվների աճի միջոցով: Տեսական մոդելների համաձայն արտաքին հաշվեկշռվածությունը հաստատվում է այն դեպքում, երբ ընթացիկ հաշվի ցանկացած անհաշվեկշռվածություն փոխհատուցվում է կապիտալի կայուն ներհոսքով: Վերջինս իր հերթին ազդում է երկրի արտաքին ակտիվների և պարտավորությունների պաշարների փոփոխության վրա, հետևաբար նաև արտաքին դիրքի վրա, ինչն էլ հանգեցնում է իրական հավասարակշիռ փոխարժեքի փոփոխությունների:
2. տրանսֆերտները ազդում են նաև ներքին հավասարակշռության վրա, ինչը դիտարկվում է մի իրավիճակ, որտեղ ներքին տնտեսության կապիտալի և աշխատուժի շուկաներն ամբողջովին հավասարակշռված են: Եվ եթե տրանսֆերտները հանգեցնում են ծառայությունների նկատմամբ պահանջարկի լրացուցիչ աճի, ապա ոչ արտահանելի հատվածում հարաբերական գները կաճեն՝ հանգեցնելով իրական փոխարժեքի արժևորման: Նմանապես շուկայի կոշտությունները կարող են հանգեցնել նաև արտադրողականությունների տարբերությունների առաջացմանը արտահանելի և ոչ արտահանելի ճյուղերի միջև: Օրինակ՝ եթե տրանսֆերտները հանգեցնում են աշխատավարձերի աճի, ապա աշխատավարձերի աճի լրացուցիչ ճնշումները արտահանելի ճյուղում կարող է բերել զբաղվածության ճշգրտումների՝ մրցունակության պահպանման խնդիրներից ելնելով: Մինչդեռ ոչ արտահանելի հատվածում գործատուները աշխատավարձերի աճը կարող են փոխանցել գների վրա: Արդյունքում՝ տրանսֆերտները կարող են բերել արտադրողականության բարձր աճի և ցածր գնաճի արտահանելի ճյուղում աշխատավարձերի վրա ազդեցության միջոցով:
3. երրորդ հնարավոր ուղին, որով տրանսֆերտները կարող են ազդել իրական փոխարժեքի վրա, դա տնտեսական աճի վրա ազդեցության միջոցով է: Նշենք, որ այս դեպքում իրական փոխարժեքի վրա ազդեցության ուղղություններն անորոշ են: Մի կողմից տնտեսական աճի տեմպերի արագացումը կնվազեցնի զուտ արտաքին ակտիվներ/ՀՆԱ հարաբերակցությունը և այդպիսով կբերի իրական փոխարժեքի արժեզրկման: Մյուս կողմից, եթե երկրի զուտ արտաքին ակտիվների դիրքը բացասական է արտերկրի

համեմատ, տնտեսական աճը կնվազեցնի արտաքին պարտավորություններ/ՀՆԱ հարաբերակցությունը՝ հանգեցնելով իրական փոխարժեքի արժևորման: Ներքին միջավայրի տեսանկյունից, տնտեսական աճի տեմպերի արագացումը կհանգեցնի ներքին պահանջարկի համեմատաբար բարձր աճի, հետևաբար նաև ոչ արտահանելի ապրանքների հարաբերական գների աճի, այնուհետև իրական փոխարժեքի արժևորման: Այսպիսով՝ տնտեսական աճի ընդհանուր ազդեցությունը կարող է շարժվել երկու ուղղություններով, կամ մեկը մյուսին զրոյացնելով չունենա որևէ ազդեցություն:

Այժմ ներկայացնենք ՀՀ ԿԲ կողմից իրականացված "Իրական հավասարակշիռ փոխարժեքի մոդելը Հայաստանում" նյութի արդյունքները միայն տրանսֆերտների ազդեցության մասով[26]: Իրական փոխարժեքի գնահատման համար կիրառվել է սխալների ուղղման մոդելը (Error Correction), որը գնահատելով ստացվել է հետևյալ արդյունքը.

D(LOG(REER)) = -0.38*REER_SA(-1)+0.79*D2*TRANSFSM(-1)+0.02*LOG(CAPINFSM(-1))+
(-5.84) (5.13) (3.65)
0.32*D(NEER_SA)-0.13*D2+0.64*(GINV_GDP(-4)-GINV_GDP(-2))+1.30*GINV_GDP(-4)+1.67
(3.92) (-4.89) (2.99) (4.11) (5.70)

որտեղ

D(LOG(REER)- իրական արդյունավետ փոխարժեքի լոգարիթմական արտահայտության առաջին տարբերություն

REER_SA(-1)- իրական արդյունավետ փոխարժեքի հարթեցված շարքի լագային արժեքն է

TRANSFSM(-1) – տրանսֆերտներ/ՀՆԱ հարաբերակցության հարթեցված շարքի լագային արժեքը

LOG(CAPINFSM(-1))-կապիտալ ներհոսքի հարթեցված շարքի լոգարիթմական արտահայտությունը

D(NEER_SA)-անվանական արդյունավետ փոխարժեք

GINV_GDP- պետական ներդրումներ/ՀՆԱ

D2-կառուցվածքային փոփոխական, որը ցույց է տալիս 2003թ-ից սկսած տրանսֆերտների բարձր աճի ազդեցությունը: Մինչև 2003թ. տրանսֆերտների ազդեցությունը իրական փոխարժեքի վրա էական չի եղել:

[26] Նյութի մանրամասն նկարագրությունը տե՛ս Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի բանբեր 2007թ. 4-եռամսյակ: Վահագն Գրիգորյան, Արփինե Դալլաքյան՝ «Իրական հավասարակշիռ փոխարժեքի մոդելը Հայաստանում:

Այստեղ LOG(REER_SA(-1))-ի գործակիցը իրենից ներկայացնում է սխալների ուղղման գործակիցը: Տրանսֆերտների երկարաժամկետ ազդեցության գործակիցը ստացվում է (TRANSFSM(-1))-ի գործակիցը բաժանելով սխալների ուղղման գործակցին հակառակ նշանով և հավասար է 2.07: Այսինքն տրանսֆերտ/ՀՆԱ հարաբերակցության մեկ տոկոսային կետ աճը հանգեցնում է 2.07 տոկոս իրական փոխարժեքի արժևորման: Այստեղ նշենք, որ վերոնշյալ փոփոխականների կարճաժամկետ ազդեցությունը իրական փոխարժեքի վրա արտահայտվում է անվանական փոխարժեքի միջոցով, որն արդեն ներառված է հավասարման մեջ:

Բերենք նաև 2003-2007թթ. գրանցված արժևորման մեջ տրանսֆերտների ազդեցության կշիռը: 2003թ. առաջին եռամսյակից մինչև 2007 թվականի երկրորդ եռամսյակը երկարաժամկետ հավասարակշիռ իրական փոխարժեքը արժևորվել է 23.7 տոկոսով, որից 13.6 տոկոսային կետը (ընդհանուր արժևորման 57.2 տոկոսը) պայմանավորվել է ՀՆԱ-ի մեջ տրանսֆերտների տեսակարար կշռի ավելացմամբ:

7.2. Տրանսֆերտ-տնտեսական աճ

Այժմ կառուցենք մոդել, որտեղ կփորձենք տալ տրանսֆերտների տնտեսական աճի վրա ազդեցության քանակական գնահատական: Այն գնահատում է տրանսֆերտների էկզոգեն շոկի երկարաժամկետ բազմարկչային ազդեցությունները: Ներկայացվող մոդելը վերաբերում է երկարաժամկետ հատվածում մակրոտնտեսական հիմնական փոփոխականների միտումների կանխատեսումներին: Այն փոքր բաց տնտեսության մասնակի հավասարակշռության մոդել է առաջարկի և պահանջարկի հավասարումներով: Մոդելում չկան գնային կոշտություններ, հետևաբար չկա գնաճը որոշող հավասարում, այդ իսկ պատճառով այն չի ծածկում տնտեսության տատանողականությունը կարճաժամկետ հատվածում:

Հավասարումների առաջին խումբը պահանջարկի բաղադրիչների վարքագծային հավասարումներն են և ապրանքային շուկայի հավասարակշռությունը նկարագրող նույնությունը: Ինչ վերաբերում է առաջարկին, ապա այն ներկայացված է Կոբ-Դուգլասի արտադրական ֆունկցիայով, որտեղ աշխատուժը ֆիքսված է: Հաջորդ առանձնահատկությունը վճարային հաշվեկշռի հավասարակշռության պայմանն է: Այսինքն՝ արտահանման հասույթներով և տրանսֆերտներով պայմանավորված արտարժույթի առաջարկը հավասար է ներմուծմամբ պայմանավորված արտարժույթի պահանջարկին:

Մոդելի կառուցվածքը

Սպառման վարքագծային հավասարում

c_g =c0* c_g(-1) + (1-c0)* ((1/(1+k_tr))*y_g*c1+ (k_tr/(1+k_tr))*tr_g*c2) (1)

c_g-մասնավոր սպառման աճ

y_g-իրական ՀՆԱ աճ

tr_g-տրանսֆերտների աճ

k_tr=tr(-1)/y(-1)-տրանսֆերտ/ՀՆԱ հարաբերություն

c1, c2– սպառման վրա համապատասխանաբար եկամտի և տրանսֆերտների երկարաժամկետ ազդեցության գործակիցներ

c0-սպառման նախորդ ժամանակահատվածի աճի ազդեցության գործակից

Ներմուծման վարքագծային հավասարում

Imp_g = m0*imp_g(-1) + (1-m0)*((m1*(1/(1+k_tr))*y_g + k_tr/(1+k_tr)*tr_g – m2*q_g) (2)

Imp_g- ներմուծման աճ

q_g- իրական փոխարժեքի աճ (աճը արժեզրկում)

y_g- իրական ՀՆԱ աճ

Արտահանման վարքագծային հավասարում. Այստեղ ենթադրվում է, որ ընդհանուր արտադրողականության աճը հավասար է արտահանելի ճյուղի արտադրողականությանը, և հետևաբար արտահանման աճին:

ex_g= y_g+q_g*e1 (3)

ex_g – արտահանման աճ

q_g- իրական փոխարժեքի փոփոխություն

Առաջարկի հավասարում

Պարզության համար աշխատուժը կհամարենք հաստատուն:

y_g = (kap/kap(-1)) ^{a} -1 (4)

kap =kap(-1)*(1-0.05) + inv

kap, kap(-1) – կապիտալի համապատասխանաբար ընթացիկ և նախորդ տարվա պաշարները

inv- ներդրումների մակարդակը

a – կապիտալի բաժինը ավելացված արժեքի մեջ

Ներդրումների հավասարում, որը ստացվում է ամբողջական պահանջարկի նույնությունից

$$Y=C+I+G+X-M$$

Inv_g=(y_g-c(-1)/y(-1)*c_g-ex(-1)/y(-1)*ex_g+imp(-1)/y(-1)*imp_g-gov(-1)/y(-1)*gov_g)/(inv(-1)/y(-1)) (5)

Պետական ծախսերի և ներդրումների հավասարում

Պարզության համար ենթադրվել է, որ պետական ծախսերի աճը հավասար է ՀՆԱ աճին:

gov_g=y_g (6)

gov_ g- պետական սպառման և ներդրումների աճ

y_ g – իրական ՀՆԱ աճ

Վճարային հաշվեկշռի հավասարակշռությունն ապահովող նույնություն

ex/q – imp/q - trf =0 (7)

ex/q- արտահանման դոլարային ծավալ

imp/q- ներմուծման դոլարային ծավալ

trf- տրանսֆերտների դոլարային ծավալ

q- իրական փոխարժեք

(7) հավասարման երկու մասը բազմապատկելով իրական փոխարժեքով կստանանք համապատասխան ցուցանիշների իրական արտահայտությունները:

ex – imp – trf*q=0 (8)

trf*q- մասնավոր տրանսֆերտները իրական արտահայտությամբ

Փոփոխականների մակարդակները և աճերը բնութագրող հավասարումներ

c = (1+c-g)*c(-1)

y =y(-1)*(1+y-g)

imp = (1+imp-g)*imp(-1)

inv = (1+inv-g)*inv(-1)

gov = (1+gov-g)*gov(-1)

q = (1+q-g)*q(-1)

tr_g=tr/tr(-1) -1

ex_g=ex/ex(-1)-1

Ինչ վերաբերում է մոդելի հավասարումներում կիրառված պարամետրերին, նշենք, որ դրանք հիմնականում գնահատվել են հաշվի առնելով վերջին տարիներին տնտեսության մեջ տեղի ունեցող կառուցվածքային տեղաշարժերը: Միևնույն ժամանակ հաշվի են առնվել նաև համապատասխան ռեգրեսիոն վերլուծություններում ստացված արդյունքները:

c0	c1	c2	m0	m1	m2	a	e1
0.6	0.9	0.9	0.6	0.9	0.55	0.6	0.55

Մոդելի գործարկման արդյունքները վկայում են, որ ներկայացված մոդելը լուծվում է միարժեքորեն և զուգամիտում է փոփոխականների կայուն մակարդակի: Վերջինս իրականացնում է մակրոտնտեսական հիմնական փոփոխականների կանխատեսումներ և ցույց է տալիս տրանսֆերտների էկզոգեն շոկի բազմարկչային ազդեցությունները տարբեր մակրոտնտեսական փոփոխականների վրա:

Նախքան տրանսֆերտների աճի տարբեր սցենարների ներկայացումը, տեսնենք թե տրանսֆերտների փաստացի աճի ցուցանիշներով մոդելը ինչպես է մոտարկում մակրոտնտեսական ցուցանիշները: Այնուհետև՝ կներկայացնենք հետևյալ երեք սցենարները՝ տրանսֆերտների ծավալների զրոյական աճի սցենար, տրանսֆերտների ծավալների աճի սցենար և տրանսֆերտների ծավալների նվազման սցենար:

Աղյուսակ 10. Մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսումները 2003-2007թթ. տրանսֆերտների փաստացի աճի պայմաններում (փոփոխականների իրական աճեր, բացի տրանսֆերտների աճերից).

	Սպառման աճ,%		Արտահանման աճ,%		Ներմուծման աճ,%		Ներդրումների աճ,%		Իրական փոխարժեքի աճ,% -նշանը արժևորում		Տրանսֆերտ. աճ,%	Իրական ՀՆԱ աճ,%	
	ըստ մոդելի	փաստ.	ըստ մոդելի	փաստ.	ըստ մոդելի	փաստ.	ըստ մոդելի	փաստ.	ըստ մոդելի	փաստ.	փաստ.	ըստ մոդելի	փաստ.
2003	9.1	**6.9**	3.5	**12.7**	11.1	**18.0**	29.3	**35.2**	-8.5	**10.2**	**41.0**	10.2	**14.0**
2004	10.9	**8.9**	3.0	**-16.2**	14.9	**7.3**	35.3	**30.5**	-12.0	**-3.2**	**56.0**	12.0	**10.5**
2005	11.6	**8.7**	7.9	**8,5**	15.0	**22.3**	24.7	**26.9**	-3.8	**-8.9**	**30.0**	12.4	**13.8**
2006	12.1	**8.3**	7.7	**-1.0**	15.3	**-1.4**	22.7	**36.1**	-4.3	**-6.5**	**30.0**	12.6	**13.2**
2007	12.5	**12.2**	7.1	**6.8**	15.8	**28.0**	21.8	**15.5**	-5.4	**-12.6**	**32.0**	12.6	**13.8**
Միջին	11.3	**9.0**	5.8	**2.2**	14.4	**14.9**	26.8	**28.8**	-6.8	**-4.2**	**37.8**	12.0	**13.1**

Ինչպես տեսնում ենք աղյուսակից, մոդելը միջինժամկետում բավականին լավ բնութագրում է տնտեսության տարբեր մակրոցուցանիշների վարքագիծը նշված տարիներին: Իսկ ինչ վերաբերում է տրանսֆերտների նպաստմանը տնտեսական աճին, ապա վերջինիս գնահատման համար ներկայացնենք տրանսֆերտների զրոյական աճի սցենարը և համեմատենք տրանսֆերտների փաստացի աճերով սցենարի հետ:

Աղյուսակ 11. Տրանսֆերտների նպաստումը տնտեսական աճին 2003-2007թթ. ընթացքում

	c_g	ex_g	gov_g	imp_g	inv_g	k_tr	q_g	tr_g	trf_g	y_g	trf_g	y_g	Նպաստումը տնտեսական աճին
2003	7.56	8.35	8.16	6.84	7.81	11.13	3.32	3.32	0.00	**8.16**	41.0	**10.2**	**2.0**
2004	7.06	7.44	7.47	6.05	6.30	10.64	2.66	2.66	0.00	**7.47**	56.0	**12.0**	**4.5**
2005	6.54	6.70	6.83	5.45	5.32	10.16	2.25	2.25	0.00	**6.83**	30.0	**12.4**	**5.6**
2006	6.05	6.09	6.27	4.97	4.70	9.72	1.95	1.95	0.00	**6.27**	30.0	**12.6**	**6.3**
2007	5.59	5.58	5.79	4.57	4.32	9.33	1.73	1.73	0.00	**5.79**	32.0	**12.6**	**6.8**
2008	5.17	5.15	5.37	4.22	4.11	8.97	1.55	1.55	0.00	**5.37**	30.0	**12.4**	
2009	4.81	4.78	5.02	3.93	4.01	8.64	1.40	1.40	0.00	**5.02**	0.00	**11.7**	
2010	4.48	4.47	4.71	3.69	3.98	8.35	1.27	1.27	0.00	**4.71**	0.00	**10.9**	
2011	4.21	4.20	4.45	3.48	3.98	8.07	1.16	1.16	0.00	**4.45**	0.00	**9.9**	
2012	3.96	3.97	4.23	3.30	4.00	7.82	1.07	1.07	0.00	**4.23**	0.00	**9.0**	
2013	3.76	3.78	4.04	3.14	4.01	7.58	0.99	0.99	0.00	**4.04**	0.00	**8.1**	
2014	3.58	3.61	3.88	3.01	4.02	7.36	0.92	0.92	0.00	**3.88**	0.00	**7.4**	
2015	3.42	3.46	3.73	2.89	4.02	7.15	0.86	0.86	0.00	**3.73**	0.00	**6.8**	
2016	3.28	3.33	3.60	2.79	4.00	6.95	0.81	0.81	0.00	**3.60**	0.00	**6.3**	
2017	3.16	3.21	3.48	2.70	3.97	6.76	0.77	0.77	0.00	**3.48**	0.00	**5.9**	
2018	3.05	3.10	3.38	2.62	3.93	6.59	0.73	0.73	0.00	**3.38**	0.00	**5.6**	
2019	2.96	3.01	3.28	2.54	3.88	6.42	0.70	0.70	0.00	**3.28**	0.00	**5.3**	
2020	2.87	2.92	3.19	2.47	3.83	6.26	0.67	0.67	0.00	**3.19**	0.00	**5.0**	

Աղյուսակ 12. Տրանսֆերտների աճի տեմպերի նվազման սցենար

Date	c_g	ex_g	gov_g	imp_g	inv_g	k_tr	q_g	tr_g	trf_g	y_g
2003	9.1	3.5	10.2	11.1	29.3	11.1	-8.5	29.0	**41.0**	**10.2**
2004	10.9	3.0	12.0	14.9	35.3	13.0	-12.0	37.2	**56.0**	**12.0**
2005	11.6	7.9	12.4	15.0	24.7	16.0	-3.8	25.1	**30.0**	**12.4**
2006	12.1	7.7	12.6	15.3	22.7	17.8	-4.3	24.4	**30.0**	**12.6**
2007	12.5	7.1	12.6	15.8	21.8	19.6	-5.4	24.9	**32.0**	**12.6**
2008	12.7	7.2	12.4	15.9	20.1	21.8	-4.9	23.7	**30.0**	**12.4**
2009	12.3	8.9	11.7	14.6	15.8	24.0	-0.8	19.0	**20.0**	**11.7**
2010	11.7	9.1	10.9	13.0	12.8	25.5	0.7	15.8	**15.0**	**10.9**
2011	10.8	9.2	9.9	11.2	9.9	26.7	2.3	12.5	**10.0**	**9.9**
2012	9.8	8.7	9.0	9.5	7.8	27.3	2.8	10.0	**7.0**	**9.0**
2013	8.8	7.8	8.1	8.2	6.7	27.6	2.3	8.5	**6.0**	**8.1**

2014	7.9	7.1	7.4	7.2	5.9	27.7	2.1	7.2	**5.0**	**7.4**
2015	7.2	6.3	6.8	6.5	5.6	27.6	1.5	6.6	**5.0**	**6.8**
2016	6.6	5.7	6.3	6.0	5.4	27.5	1.1	6.1	**5.0**	**6.3**
2017	6.1	5.2	5.9	5.6	5.4	27.5	0.8	5.8	**5.0**	**5.9**
2018	5.6	4.8	5.6	5.3	5.4	27.5	0.6	5.6	**5.0**	**5.6**
2019	5.3	4.4	5.3	5.0	5.3	27.5	0.4	5.4	**5.0**	**5.3**
2020	5.0	4.1	5.0	4.8	5.3	27.5	0.2	5.3	**5.0**	**5.0**

Աղյուսակ 13. Տրանսֆերտների նվազման սցենար 2009թ-ից սկսած


Date	c_g	ex_g	gov_g	imp_g	inv_g	k_tr	q_g	tr_g	trf_g	y_g
2003	9.14	3.48	10.18	11.13	29.28	11.13	-8.48	29.04	**41.00**	**10.18**
2004	10.85	2.97	12.00	14.86	35.28	13.04	-12.05	37.21	**56.00**	**12.00**
2005	11.62	7.86	12.44	15.00	24.69	15.97	-3.80	25.06	**30.00**	**12.44**
2006	12.14	7.71	12.57	15.26	22.69	17.77	-4.28	24.44	**30.00**	**12.57**
2007	12.54	7.09	12.57	15.76	21.83	19.64	-5.39	24.88	**32.00**	**12.57**
2008	12.78	6.84	12.44	16.13	20.71	21.79	-5.66	24.52	**32.00**	**12.44**
2009	11.23	15.35	10.62	10.55	6.08	24.13	12.46	6.84	**-5.00**	**10.62**
2010	9.58	12.00	8.98	7.28	2.86	23.30	8.76	3.32	**-5.00**	**8.98**
2011	8.08	9.70	7.62	5.26	1.22	22.09	6.56	1.23	**-5.00**	**7.62**
2012	6.79	8.08	6.54	3.96	0.49	20.78	5.17	-0.08	**-5.00**	**6.54**
2013	5.73	6.89	5.69	3.09	0.29	19.49	4.26	-0.95	**-5.00**	**5.69**
2014	4.88	6.01	5.02	2.49	0.36	18.27	3.63	-1.55	**-5.00**	**5.02**
2015	4.20	5.33	4.48	2.06	0.54	17.12	3.17	-1.99	**-5.00**	**4.48**
2016	3.66	4.80	4.05	1.74	0.76	16.06	2.83	-2.32	**-5.00**	**4.05**
2017	3.24	4.37	3.71	1.51	0.97	15.08	2.56	-2.57	**-5.00**	**3.71**
2018	2.89	4.02	3.42	1.33	1.15	14.17	2.34	-2.78	**-5.00**	**3.42**
2019	2.62	3.73	3.17	1.19	1.28	13.32	2.16	-2.95	**-5.00**	**3.17**
2020	2.40	3.48	2.97	1.08	1.38	12.53	2.01	-3.09	**-5.00**	**2.97**

Փաստորեն 2004թ-ից սկսած տրանսֆերտների դերակատարումը տնտեսական աճի վրա տարեցտարի ավելացել է և պայմանավորել է ՀՆԱ աճի տեմպի շուրջ 50%-ը: Վերջինս պայմանավորված է այն հանգամանքով, որ տրանսֆերտների (ներառյալ նաև սեզոնային աշխատողների եկամուտները) կշիռը ՀՆԱ-ում 2002թ. 9.4%-ից հասել է 2007թ. մինչև 15.4%: Մոդելի արդյունքները ապացուցում են այն տեսական դրույթները, որ անգամ եթե տրանսֆերտները մեծապես ուղղվում են սպառմանը, վերջիններս ոչ արտահանելի ապրանքների սպառման միջոցով նպաստում են տնտեսական աճին: Նշված միտումները տեղի ունեն Հայաստանում, երբ վերջին տարիներին շինարարության (ոչ արտահանելի հատված) կշիռը և նպաստումը տնտեսական աճին նշանակալի մեծացել է: Միևնույն ժամանակ նշենք, որ նշված տարիներին ներդրումների աճի վրա տրանսֆերտների նպաստումը նույնպես բարձր է եղել, ինչը իր հերթին նպաստել է տնտեսական աճին: Սակայն նշված դրական կողմերից բացի տրանսֆերտների կշռի նշանակալի աճը ՀՆԱ-ում իրական փոխարժեքի արժևորման պատճառներից մեկն է հանդիսացել, որն էլ իր հերթին խթանել է

ներմուծումը և հանգեցրել ընթացիկ հաշվի պակասուրդի խորացմանը: Այնուամենայնիվ՝ միջինժամկետ հատվածում տրանսֆերտների ՝ որպես լրացուցիչ եկամտի ուղղակի ազդեցությունը (եկամտի ազդեցություն) գերազանցում է իրական փոխարժեքի արժևորման և հետևաբար՝ ներմուծման բարձր աճի ազդեցությունները: Արդյունքում՝ տրանսֆերտների աճը բազմարկչային ազդեցություններով՝ սպառման և ներդրումների միջոցով, մեծ դերակատարում է ունեցել վերջին տարիներին գրանցվող բարձր տնտեսական աճում:

Հետաքրքրական արդյունքներ են ստացվում տրանսֆերտների 2009թ-ից սկսած տարեցտարի 5.0%-ով նվազման դեպքում: Թեպետ տրանսֆերտների նվազում է տեղի ունենում, այնուամենայնիվ տնտեսական աճի տեմպերի կտրուկ դանդաղում տեղի չի ունենում հետագա տարիներին, քանի որ նախորդ տարիների տրանսֆերտների ազդեցությունները տարածվում են հետագա մի քանի տարիներին:

ՀՀ-ում տրանսֆերտների փոխանցումային մեխանիզմը նկարագրող սխեմա



8. Ընդհանուր նյութի ամփոփում

Նշված վերլուծությունում փորձ է արվել մոդելավորել տրանսֆերտների վարքագիծը միկրոմակարդակում՝ բացահայտելու համար վերջիններիս հիմքում ընկած շարժառիթները: Եթե նախկինում ալտրուիստական շարժառիթները պարզապես ենթադրվում էին, ապա այս վերլուծական նյութով փորձնականորեն ապացուցվել է ՀՀ ներհոսող տրանսֆերտների ալտրուիստական շարժառիթների գերակայությունը:

Տեսության մեջ առաջ քաշվող հիմնական գործոնը, որով տրանսֆերտների շարժառիթների համար եզրահանգումներ են արվում դա փոխկախվածությունն է տրանսֆերտների և տնային տնտեսությունների եկամուտների միջև: *Մեր դեպքում հակադարձ կախվածությունը պնդում է ալտրուիստական շարժառիթների գերակայությունը:* Միգրանտների և տնային տնտեսությունների այլ դեմոգրաֆիական բնութագրիչները նույնպես համապատասխանում են ալտրուիզմին:

Հարկ է նշել նաև, որ հնարավոր է գերագնահատվի ալտրուիզմը, քանի որ իրականում միևնույն միգրանտը կարող է գործել ստրատեգիական և ալտրուիստական շարժառիթներով միաժամանակ: Սակայն գործնականում բավականին դժվար է բացահայտել ստրատեգիական շարժառիթները:

Հետաքրքրական արդյունքներ են ստացվել տնային տնտեսության եկամուտների U-աձև ազդեցության առումով (եկամուտների քառակուսու գործակիցը դրական է), ինչը թույլ է տվել կատարել լրացուցիչ դիտարկումներ՝ պարզելու եսասիրական այլ շարժառիթների հաստատումը: Լրացուցիչ դիտարկումները, որոնք վերաբերում են գյուղական և մայրաքաղաքային, սեզոնային և ոչ սեզոնային միգրանտների տարանջատումներին, շարժառիթների մասով ցույց են տվել ալտրուիզմի գերակայությունը բոլոր դեպքերում (տնային տնտեսության եկամտի ազդեցությունը բացասական է բոլոր դեպքերում): Այսինքն՝ այն հիպոթեզները, որ շարժառիթների մասով հիմնական տարբերությունները կարող են երևալ գյուղական և քաղաքային, ինչպես նաև սեզոնային և ոչ սեզոնային միգրանտների տարանջատումների ներքո, փորձնականորեն չի ապացուցվել:

Ըստ նպատակի տրանսֆերտների տարանջատման ժամանակ, եսասիրական շարժառիթներից առկա են ինչպես անհատական՝ ժառանգության, այնպես էլ որոշակի բացառություններով ընտանեկան փոխադարձ համաձայնությունների ներքո՝ ապահովագրության շարժառիթներ:

Այնուամենայնիվ, ամբողջական եզրահանգումների համար առկա են որոշակի խնդիրներ, որոնք վերաբերում են հարցումների բազայի հետագա զարգացմանն ու որակական բարելավմանը (փորձնական կիրառության տեսանկյունից), ինչպես նաև անհրաժեշտ է ներառել նաև այլ բնութագրիչներ ու փոփոխականներ: Դրա հետևանքով հնարավոր կլինի լուծել վերլուծության մեջ

առաջ քաշվող հիմնախնդիրները: Հետագա հարցումների ժամանակ խիստ անհրաժեշտություն կա բարելավել տնային տնտեսության եկամուտների հարցման որակը, ներառել միգրանտների եկամուտների և տնային տնտեսության ակտիվների վերաբերյալ տեղեկատվությունը: Կան նաև տեխնիկական խնդիրներ, ինչպես օրինակ՝ տրանսֆերտների ծավալների միջակայքերի քանակի ավելացումը, միջակայքերի միջև տրանսֆերտների տարբերությունների հավասարաչափ բաշխումը և այլն:

Ի տարբերություն միկրոմակարդակում արված վերլուծության արդյունքների, որոնք վկայում են ալտրուիստական շարժառիթների գերակայությունը կամ առավելապես սպառման հարթեցման շարժառիթները, մակրոմակարդակում տրանսֆերտները դրականորեն (համացիկլիկայնություն) են արձագանքում ՀՆԱ տատանումներին՝ ենթադրելով ճիշտ հակառակ՝ ներդրումային, վարքագիծ: Այսինքն՝ տրանսֆերտներն ավելանում են տնտեսական լավ ժամանակաշրջանում և նվազում՝ վատ ժամանակաշրջանում: Նշված հակադիր արդյունքները կարող են պայմանավորված լինել այն հանգամանքով, որ խնդիր կա ընթացիկ տրանսֆերտների և այն գումարների գնահատման մեջ, որոնք պարզապես համարվում են միգրանտների կողմից ուղղակի ներդրումներ: Կամ միկրոմակարդակում արվող հարցումներում ներդրումային որոշումներով տրանսֆերտներ իրականացնողների բավականին փոքր մասն է ներգրավված հարցումների մեջ:

2004թ-ից սկսած տրանսֆերտների դերակատարումը տնտեսական աճի վրա տարեցտարի ավելացել է և պայմանավորել է ՀՆԱ աճի տեմպի շուրջ 50%-ը: Վերջինս պայմանավորված է այն հանգամանքով, որ տրանսֆերտների (ներառյալ նաև սեզոնային աշխատողների եկամուտները) կշիռը ՀՆԱ-ում 2002թ. 9.4%-ից հասել է 2007թ. մինչև 15.4%: Մոդելի արդյունքները ապացուցում են այն տեսական դրույթները, որ անգամ եթե տրանսֆերտները մեծապես ուղղվում են սպառմանը, վերջիններս ոչ արտահանելի ապրանքների սպառման միջոցով նպաստում են տնտեսական աճին: Նշված վարքագիծը ճիշտ է Հայաստանի դեպքում, երբ վերջին տարիներին շինարարության և ծառայությունների (ոչ արտահանելի հատված) կշիռը և նպաստումը տնտեսական աճին էապես մեծացել է: Միևնույն ժամանակ նշենք, որ նշված տարիներին ներդրումների աճի վրա տրանսֆերտների նպաստումը նույնպես բարձր է եղել, ինչը իր հերթին նպաստել է տնտեսական աճին:

Միաժամանակ նշված դրական կողմերից բացի տրանսֆերտների կշռի նշանակալի աճը ՀՆԱ-ում իրական փոխարժեքի արժևորման պատճառներից մեկն է հանդիսացել, որն էլ իր հերթին խթանել է ներմուծումը և հանգեցրել ընթացիկ հաշվի պակասուրդի խորացմանը: Այնուամենայնիվ՝ միջինժամկետ հատվածում տրանսֆերտների՝ որպես լրացուցիչ եկամտի ուղղակի ազդեցությունը (եկամտի ազդեցություն) գերազանցել է իրական փոխարժեքի արժևորման և հետևաբար՝

ներմուծման բարձր աճի ազդեցությունները: Արդյունքում՝ տրանսֆերտների աճը բազմարկչային ազդեցություններով՝ սպառման և ներդրումների միջոցով, մեծ դերակատարում ունի տնտեսական աճի վրա:

Հարկ է նշել նաև, որ ամեն դեպքում տրանսֆերտներից օգուտները չպետք է գերագնահատել, քանի որ միկրոմակարդակում տրանսֆերտ ստացող տնային տնտեսության տեսանկյունից վերջիններս կարող են առաջացնել բարոյական ռիսկի խնդիրներ՝ այդպիսով զսպելով տնտեսական աճը կամ հանգեցնելով համապատասխան բարեփոխումների ընթացքի դանդաղմանը (եթե միգրանտը և տրանսֆերտ ստացող տնային տնտեսությունը չեն գործում համատեղ օգտակարության բարձրացման սկզբունքով (moral hazard)):

9. Օգտագործված գրականություն

1. “Remittances from international migration: A comparison of El Salvador and Nicaragua”, Edward Funkhouser, The review of economics and Statistics, vol. 77, No.1 (Feb., 1995), pp. 137-146.
2. “Effects of migration on sending countries: What do we know?, Luoka T. Katseli, Robert E.B. Lucas and Theodora Xenogiani, OECD working paper No. 250, 22-June-2006.
3. “The economics of migrant’s remittances”, Hillel Rapoport and Frederc Docquier, Elsevier-North Holland, working draft-August 2004.
4. “International remittances and development: Existing evidence, Policies and Recommendations”, Ernesto Lopez-Cordova, Alexandra Olmedo, August 2006, Occasional paper 41.
5. “Are immigrant remittance flows a source of capital for development?, Ralph Chami, Connel Fullenkamp, and Samir Jahjah, IMF working paper, September 2003.
6. “The labour market effects of remittances” Stephen Drinkwater, Paul Levine, Emanuela Lotti, Flowenla discussion paper 6, Hamburg institute of international economics 2003.
7. “Remittances and development “, Lessons from Latin America, Pablo Fajnzylber and J. Humberto Lopez, The World Bank 2008.
8. “Business ycles and worker’s remittances: How do migrant workers respond to cyclical movements of GDP at home”, Serdar SayanIMF working paper 2006.
9. “Dynamic effects of migrant remittances on growth:An econometric model with an application to Mediterranean countries”, Nicholas Glytsos, Centre of Planning and Economic Research, Athens, June 2001.
10. “Remittances, Financial development and growth”, Paola Giuliano, Marta Ruiz-Arranz, Institute for the Study of Labor, June 2006.
11. King Banaian, Bryan W. Roberts,”Remittances in Armenia:Size, impacts and measures to enhance their contribution to development”, USAID/Armenia, October 2004.
12. Ruben Atoyan and Nienke Oomes, “Remittances to Armenia: Size, sources and macroeconomic implications, Republic of Armenia:Selected Issues, IMF 2006.
13. David A. Grigorian and Tigran A. Melkonyan, “Microeconomic implication of remittances in an overlapping generations model with altruism and self-interest, IMF 2008.
14. “The determinants of remittances: A review of the literature”, Jessica Hagen-Zanker, Melissa Siegel, MGSoG/2007/WP003, June 2007.

15. "Motives for private income transfers", Donald Cox, The Journal of Political Economy, Vol. 95, No.3 (June 1987), pp. 508-546.
16. "Motivations to Remit: Evidence from Botswana", Robert E. B.Lucas, Oded Stark, The Journal of Political Economy, Vol. 93, No. 5 (Oct. 1985), pp. 901-918
17. "Do Migrant Remittances Minimize the Impact of Macro-volatility on the Poor in Ghana?", Peter Quartey2 and Theresa Blankson, Institute of Statistical, Social and Economic Research, University of Ghana, December 2004.
18. "Remittances and development. Trends, Impacts, and Policy Options", Dovelyn Rannveig Agunias, Migration Policy Institute.
19. "Migration and Remittances: Eastern Europe and the Former Soviet Union", Ali Mansoor, Bryce Quillin, The International Bank for Reconstruction and Development/The World Bank, 2007.
20. "Worker Remittances and Growth: The Physical and Human Capital Channels", Thomas Ziesemer, United Nations University - Maastricht Economic and social Research and training centre on Innovation and Technology.
21. "Remittances, Institutions and Economic Growth", Natalia Catrinescu Harvard University, Miguel Leon-Ledesma University of Kent, Matloob Piracha University of Kent and IZA, Bonn.
22. "Determinants and impact of remittances on the Turkish economy" Nazlı NazliElif Koksal, University of Sorbonne, January 2006.
23. "Worker Remittances and Capital Flows to Developing Countries", Claudia M. Buch and Anja Kuckulenz, Discussion Paper No. 04-31, Centre for European Economic Research.
24. "Altruism, Exchange or Indirect Reciprocity: What do the Data on Family Transfers Show?", Luc Arrondel and Andre Mason, Delta-Cnrs, Working paper No.2002-18
25. "A Gravity Model of Workers' Remittances", Erik Lueth and Marta Ruiz-Arranz, International Monetary Fund, WP/06/290.
26. "What Affects the Remittances of Turkish Workers: Turkish or German Output?", Sule Akkoyunlu, Konstantin A. Kholodilin, German Institute for Economic Research, September 2006.
27. "Macroeconomic Determinants of Workers' Remittances: Host vs. Home Country's Economic Conditions", Carlos Vargas-Silva Department of Economics Western Michigan University and Peng Huang Department of Economics Western Michigan University, November 2005.

28. "The determinants of remittances: A comparison between Albania and Moldova", Jessica Hagen-Zanker Maastricht Graduate School of Governance Melissa Siegel Maastricht Graduate School of Governance, June 2007.
29. "Determinants of Savings and Remittances: Empirical Evidence from Immigrants to Gerrnany", Mathias Sinning RWI Essen and IZA Bonn, June 2007.
30. "Assessing the impact of migrant worker's remittances on poverty", Admos Chimhowu, (IDPM, University of Manchester) Jenifer Piesse (Kings College, London) and Caroline Pinder (WISE Development Ltd), November 2003.
31. "Remittances, Migration and Social Development: A Conceptual Review of the Literature", Hein de Haas, United Nations Research Institute for Social Development, Social Policy and Development Programme Paper Number 34 October 2007.
32. "An Empirical Analysis of Compulsory and Voluntary Remittances Among Domestic Workers in Tunisia", Benoit Dostie and Desire Vencatachellum, Institute of Applied Economics, HEC Montreal September 24, 2002.
33. "Why Do Migrants Remit? An Analysis for the Dominican Sierra", Bndict de la Brire, Alain de Janvry, Sylvie Lambert, and Elisabeth Sadoulet, International Food Policy Research Institute, October 1997.
34. "Remittances. Overview of the existing literature", S. Salomone, September 2006.
35. "The Cyclical Implications of Immigrant Workers' to Uganda" Jimmy Apaa-Okello, Research Department, Bank of Uganda Francis Anguyo Research Department, Bank of Uganda, November 2006.
36. "Impact of Remittances on Poverty and Financial Development in Sub-Saharan Africa" Prepared by Sanjeev Gupta, Catherine Pattillo, and Smita Wagh, International Monetary Fund, WP/07/38
37. "Remittances: Transaction Costs, Determinants, and Informal Flows", Caroline Freund, World Bank, Nikola Spatafora, International Monetary Fund, WPS3704.
38. "Estimating remittance functions for rural-based Albanian emigrants", Etleva Germenji, Ismail Beka and Alexander Sarris. Working paper, ACE research project, P97-8158-R, 2001.
39. "Measuring the Income Effects of Migrant Remittances: A Methodological Approach Applied to Greece", Nicholas P. Glytsos, Economic Development and Cultural Change, Vol. 42, No. 1. (Oct., 1993), pp. 131-168.
40. "Factors Determining Migrant Remittances: The Case of Greece", Theodore P. Lianos, International Migration Review, Vol. 31, No. 1. (Spring, 1997), pp. 72-87.

41. "A Model of Migration and Remittances Applied to Western Kenya", John Hoddinott Oxford Economic Papers, New Series, Vol. 46, No. 3. (Jul., 1994), pp. 459-476.
42. "The Macroeconomics of Remittances: The Case of Tajikistan", Alexei Kireyev, International Monetary Fund, January 2006
43. "Introduction: The Renewed Role of Remittances in the New World Order", Richard C. Jones, Economic Geography, Vol. 74, No. 1. (Jan., 1998), pp. 1-7.
44. "Remittances: The New Development Mantra?", Devesh Kapur Harvard University and Center for Global Development August 25, 2003
45. "International Migration, Remittances and Real Incomes: Effects on the Source Country", Mats Lundahl, The Scandinavian Journal of Economics, Vol. 87, No. 4. (Dec., 1985), pp. 647-657.
46. "An investigation of household remittance behaviour", Kenneth Clark Stephen Drinkwater, September 2001, School of Economic Studies University of Manchester.
47. "International Migrant Remittances and their Role in Development", International Migration Outlook 2006. OECD 2006
48. "A Theory of Workers' Remittances With an Application to Morocco", Prepared by Jacques Bouhga-Hagbe, International Monetary Fund, WP/04/194
49. "Altruism and Workers' Remittances: Evidence from Selected Countries in the Middle East and Central Asia", Prepared by Jacques Bouhga-Hagbe1, International Monetary Fund, WP/06/130
50. "The Demographic, Economic and Financial Determinants of International Remittances in Developing Countries", Richard H. Adams, Jr., Development Prospects Group, The World Bank, March 2008.
51. "Brain Drain and Brain Gain: A New Perspective on Highly Skilled Migration", Prepared by Catalina Andreea Pinescu, Diplomatic Academy, Ministry of Foreign Affairs, Bucharest
52. "Does Brain Drain Lead to Institutional Gain? A Cross Country Empirical Investigation", Xiaoyang Li, John McHale.
53. "Is the Brain Drain an Unmitigated Blessing?, Riccardo Faini, Discussion Paper No. 2003/64, World Institute for Development Economics Research.
54. "A Gain with a Drain? Evidence from Rural Mexico on the New Economics of the Brain Drain", Steve Boucher, Oded Stark, J. Edward Taylor. ZEF – Discussion Papers on Development Policy, Bonn, October 2005.
55. "Increasing the Macroeconomic Impact of Remittances on Development", Dilip Ratha and Sanket Mohapatra Development Prospects Group The World Bank, November 26, 2007.

56. "Remittances, Exchange Rate Regimes and the Dutch Disease: A Panel Data Analysis", Emmanuel K.K. Lartey California State University-Fullerton, Federico S. Mandelman Federal Reserve Bank of Atlanta, Pablo A. Acosta Corporacion Andina de Fomento, February 12, 2008
57. "Workers' Remittances and the Real Exchange Rate: A Paradox of Gifts", Catalina Amuedo-Dorantes, Department of Economics San Diego State University, Susan Pozo Department of Economics Western Michigan University, October 2001 February 2002
58. "Remittances and the Dutch Disease", Pablo A. Acosta, Emmanuel K.K. Lartey, and Federico S. Mandelman, Federal Reserve Bank of Atlanta, Working Paper 2007-8 April 2007.
59. "Migrant Remittances, Shocks and Povery in Urban Ethiopia: An Analysis of Micro Level Panel Data", Dejene Aredo Addis Ababa University, February 2005, Addis Ababa, Ethiopia.
60. "An investigation of household remittance behaviour", Kenneth Clark Stephen Drinkwater September 2001 School of Economic Studies University of Manchester, Department of Economics University of Surrey Guildford Surrey, UK.
61. "Resource Transfers to the Elderly: Do Adult Children Substitute Financial Transfers for Time Transfers?", Julie Zissimopoulos, DRU-2542 March 2001, Labor and Population Program Working Paper Series 01–05.
62. "A Note on the Multi-Good Model of Altruistic Private Transfers", Masato Hiwatari Department of Advanced and Social Studies, University of Tokyo. Economics Bulletin, Vol. 9, No. 6 pp. 1-7 Submitted: January 31, 2007. Accepted: April 9, 2007.
63. "Remittances and savings from international migration: Theory and evidence using a matched sample, Una Okonkwo Osili, Department of Economics, Indiana University–Purdue University at IN, United States, June 2006. Journal of Development Economics 83 (2007) 446–465.
64. "Motives for Private Transfers Over The Life Cycle: An Analytical Framework and Evidence for Peru". Donald Cox, Zekeriya Eser, Emmanuel Jimenez, April 1996.
65. "Migration, development and remittances in Europe: mixed impacts and the role of institutions", Joao Peixoto and Ana Fonseca, SOCIUS Working Papers No 2/2008.
66. "The empirical analysis of transfer motives", Erik Schokkaert (Center for Economic Studies, KULeuven) August 2003.

67. "The labour market effects of remittances", Stephen Drinkwater, Paul Levine, Emanuela Lotti, FLOWENLA DISCUSSION PAPER 6, Hamburg Institute of International Economics, 2003.
68. "Macroeconomic Determinants of Remittances: Evidence from India", Poonam Gupta, International Monetary Fund, WP/05/224.
69. "Intergenerational Contracts, Remittances, and Growth", Jean-Louis Arcand†, Ghazi Boulila and Christian Tritten, March 5, 2003.
70. Freud, C. and Spatafora, N. (2005). Remittances, Transaction Costs, Determinants, and Informal Flows. World Bank Policy Research Working Paper, 3704.
71. Amuendo-Dorantes, C. and Pozo, S. (2006). Remittances as insurance: evidence from Mexican immigrants. Journal of Population Economics, 19(2), 227-254.
72. Altonji, J.G., F. Hayashi and L.J. Kotlikoff (1997): Parental altruism and inter-vivos transfers: theory and evidence, Journal of Political Economy, 105 (6): 1121-66.
73. Chavez, R. A. P. (2004).Remittances as a Strategy to Cope With Systemic Risk: Panel Results from Rural Households in El Salvador. Ohio State University, Columbus.
74. van Dalen, H.P., G. Groenewold, and T. Fokkema, 2005, " The effect of remittances on emigration intentions in Egypt, Morocco, and Turkey", population studies 59(3): 375-392.
75. Brown, Richard P.C., "Estimating Remittance functions for Pacific Island migrants", World development, 25, pp. 613-626, 1997.
76. Rodriguez, E., Horton, S. (1995) "International return migration and remittances in Philippines" Department of economics and institute for policy analyses, University of Toronto.